ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



« Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագիր

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԳԵՆԴԵՐԱՁԳԱՅՈՒՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մոնիկա Էլլենա

Գենդերային և մեդիայի հարցերով փորձագետ, Եվրոպայի խորհրդի միջազգային խորհրդատու

Հայաստանյան համատեքստը՝ Անի Կոջոյանի կողմից

Գենդերային հարցերով մասնագետ, Եվրոպայի խորհրդի ազգային խորհրդատու

Եվրոպայի Խորհուրդ

Սույն աշխատությունում ներկայացված կարծիքները հեղինակների պատասխանատվությամբ են և պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլ նամակները պետք է հասցեագրվեն Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գենդերային հավասարության բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ gender.equality@coe.int).

Կազմը և էջադրումը.
Task LLC

Լուսանկարները.
Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ,
սեպտեմբեր 2024 թվական

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **4**

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ **5**

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ. ԻՆՉ և ԻՆՉՈՒ **7**

Գենդերազգայուն լուսաբանումը՝ 9

Ընդհանուր պատմությունների վերաբերյալ գենդերազգայուն դիտանկյունները 10

Բառերի ընտրությունը կարևոր է՝ գենդեր և սեռ 10

Կարծրատիպերը և ներքին կանխակալությունը 11

Գործնական մաս. ինչ է պետք անել, իսկ ինչը՝ ոչ 11

Էթիկական լուսաբանումը 13

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ **15**

Էթիկական նկատառումները 16

Պատասխանատու լուսաբանումը 16

Ինչպես անցկացնել հարցազրույցը 17

Ապահովեք նրանց հետո հետագա աշխատանքը 17

Իրավական և անվտանգության նկատառումները 17

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ **18**

Կին և աղջիկ փախստականների վերաբերյալ լուսաբանումը 19

Հարցազրույցի անցկացումը 21

Ստացեք տեղեկացված համաձայնություն 21

Կատարեք հարցադրումներ 22

Սահմանները հարգելը 22

Հարցազրույցից հետո 22

Էթիկական նկատառումները 23

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ **24**

Հայաստանի Հանրապետություն 27

Ռումինիա 27

Մոլդովայի Հանրապետություն 27

Իտալիա 27

Ինչպես արձագանքել 27

Հավելված 1. ամփոփ ստուգաթերթ լրագրողների համար 29

Պատկերներ և նկարներ 29

Լուսաբանման ժամանակ ապահովել բազմազան աղբյուրներ 29

Ո՞ւմ տեսանկյունից են լուրերը հաղորդվում 29

Տրամադրեք համատեքստ 29

Հավելված 2. տրավմաների մասին տեղեկացված լրագրությունը 30

Հարցազրույցի ժամանակ 30

Հարցազրույցից հետո 31

Հավելված 3. ռեսուրսներ՝ Հայաստանում կին և աղջիկ փախստականների համար 32

ՀՂՈՒՄՆԵՐ **33**

Ներածություն

Լրատվամիջոցները հսկայական ազդեցություն ունեն մեր մտքերի և գործողությունների ձևավորման վրա՝ արտացոլելով հասարակական կառուցվածքներն ու համակարգերը և ներազդելով դրանց վրա: Հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը, սոցիալական մեդիան ձևավորում են հասարակական կարծիքները, ընկալումներն ու համոզմունքները՝ կոփելով մարդկանց աշխարհընկալման ձևը և, որպես հետևանք, հասարակության մեջ վարվելակերպը:

Լրատվամիջոցների դերն է ճշգրտորեն արտացոլել հասարակությունները: Գենդերային «ոսպնյակների» կիրառումը հնարավորություն է տալիս լրագրողներին աշխարհը ներկայացնել իր նրբերանգներով ու բազմազանություններով՝ այդպիսով կոտրելով ձևավորված կարծրատիպերը: Լրագրողները կարող են նպաստել այդ մոտեցումների փոփոխմանը՝ կանանց և տղամարդկանց ներկայացնելով որպես հավասարապես գնահատված ու զանազան, այլ ոչ թե ամրապնդել գենդերային վնասաբեր կարծրատիպերը:

Գենդերազգայուն լուսաբանումն այսօր հատկապես արդիական է՝ հաշվի առնելով հետևյալ երեք մարտահրավերները՝ կանանց նկատմամբ սեռական և գենդերային բռնությունը, բռնի տեղահանումը և ապատեղեկատվությունը:

Կանանց նկատմամբ սեռական և գենդերային բռնությունը (ՍԳԲ), այդ թվում՝ ընտանեկան բռնությունը, կանանց՝ մարդու իրավունքների խախտում է: Լրատվամիջոցների կողմից կանանց նկատմամբ սեռական և գենդերային բռնության լուսաբանումը կարող է կամ խորացնել խնդիրը, կամ հարթել այն: Լրատվամիջոցների կողմից պատշաճ կերպով չլուսաբանումը կարող է այդ բռնությունը դարձնել սովորական և հասարակ երևույթ, մինչդեռ պատշաճ կերպով լուսաբանումը կարող է բարձրացնել ՍԳԲ-ի վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը, շեշտադրել դրա կապը գենդերային հավասարության ու մարդու իրավունքների հետ և նպաստել դրա կանխարգելմանն ու պատժմանը:

Նմանատիպ զարգացումներ են նկատվում բռնի տեղահանման և, մասնավորապես՝ լրատվամիջոցների կողմից կին փախստականների մասին լուսաբանման հարցում: Շատ հաճախ զինված հակամարտությունների լուսաբանումը հիմնականում ներգրավում է տղամարդկանց: Նրանց է առաջարկվում բացատրել և մեկնաբանել հակամարտությունը տարբեր դերերում՝ որպես կռվի մասնակիցներ, հրամանատարներ, փորձագետներ և քաղաքական գործիչներ: Այնուամենայնիվ, հակամարտությունը տարբեր ազդեցություններ ունի քաղաքացիական կանանց, տղամարդկանց, աղջիկների ու տղաների վրա՝ պոտենցիալ ձևով խորացնելով գենդերային անհավասարությունը: Գենդերահեն տվյալների բացերը կանանց և աղջիկներին ավելի «անտեսանելի» են դարձնում: Լրատվամիջոցների կողմից փախստականների առջև ծառացած այդ մարտահրավերների ու դրանց լուծմանն ուղղված նրանց ջանքերի վերաբերյալ ճշգրիտ ու արդար լուսաբանումը կարող է օգնել նրանց ծանր իրավիճակի բարելավման գործում:

Սոցիալական մեդիայի լայն կիրառությամբ պայմանավորված՝ ապատեղեկատվության միջոցով տարածվում է միտումնավոր մոլորեցնելու կամ տնտեսական, սոցիալական և քաղաքական օգուտ ստանալու նպատակով կեղծ կամ ապակողմնորոշող բովանդակություն, ինչը կարող է վնաս հասցնել հասարակությանը: Փաստերը ցույց են տալիս, որ կանայք և աղջիկները թիրախավորվում են անհամաչափ. գենդերային ապատեղեկատվությունն էլ ավելի է խորացնում ստեղծված իրավիճակը՝ գործիք դարձնելով գենդերային կարծրատիպերը և կիրառելով կնատյաց պատմույթներ (նարատիվներ)՝ հասարակական գործիչներին կամ տեսակետները շփոթեցնելու, վարկաբեկելու կամ նսեմացնելու նպատակով (Վոգտ և այլք, 2003թ.):

Սույն ուղեցույցը մշակվել է *«Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում (2022-2023թթ.):* Սույն ուղեցույցը հիմնված է նաև Եվրոպայի խորհրդի կողմից *«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման ուղին Հայաստանում»* ծրագրի *(2019-2022թթ.)* շրջանակներում մշակված՝ լրագրողների կողմից լուսաբանելու չափանիշների վրա (Բալաբանովա և Կոջոյան, 2020թ.)՝ ընդլայնելով դրանց շրջանակն ու ներառելով կին և աղջիկ փախստականների հետ կապված հարցերի լուսաբանման եղանակների մասին տեղեկություններ:



Մասնավորապես, սույն ուղեցույցի նպատակն է՝

- բարձրացնել գենդերային հավասարությանը նպաստելու հարցում և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարում լրատվամիջոցների դերի մասին ընկալումները.
- թույլ տալ լրագրողներին, խմբագիրներին և մեդիա մասնագետներին գործածել գենդերային առումով ներառական լեզու ու պատկերներ և խուսափել կանանց և տղամարդկանց սեքսիստական ներկայացումից.
- խթանել հակամարտությունից տուժած համայնքների, մասնավորապես՝ կին փախստականների դրական լույսի ներքո ներկայացումը. և
- շեշտադրել գենդերային ապատեղեկատվության աճն ու ռիսկերը և մանրամասն ներկայացնել դրանց դիմակայելու համապատասխան տեխնիկաները:

Հիմնական եզրույթները

Գենդեր. սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկանիշներ, որոնք տվյալ հասարակությունը պատշաճ է համարում կանանց և տղամարդկանց համար:

Գենդերային կարծրատիպ. ընդհանրացված տեսակետ կամ կանխակալ պատկերացում հատկանիշների կամ առանձնահատկությունների կամ այն դերերի մասին, որոնք ունեն կամ պետք է ունենան կամ կատարեն կանայք և տղամարդիկ: Գենդերային կարծրատիպը վնասաբեր է, երբ սահմանափակում է կանանց և տղամարդկանց՝ իրենց անձնական կարողությունները զարգացնելու, մասնագիտական առաջխաղացում ունենալու և կյանքի վերաբերյալ ընտրություն կատարելու հնարավորությունները:

Արտակարգ իրավիճակներում գենդերային բռնություն. արտակարգ իրավիճակներում՝ հակամարտությունների կամ բնական աղետների ժամանակ բռնության, շահագործման և բռնարարքի ռիսկը, հատկապես՝ կանանց և աղջիկների դեպքում մեծանում է, իսկ ազգային համակարգերը և համայնքային ու սոցիալական աջակցության շրջանակները կարող են թուլանալ: Նախկինում գոյություն ունեցող գենդերային անհավասարությունները կարող են խորանալ. կանայք և դեռահաս աղջիկները հաճախ գտնվում են սեռական բռնության, շահագործման և բռնարարքի, հարկադիր կամ վաղ ամուսնության, հավասար հնարավորությունների բացակայության և վնասաբեր ավանդական գործելակերպերի ռիսկի առջև: Տղամարդիկ և տղաները նույնպես կարող են լինել բռնություն վերապրածներ, իսկ արտակարգ իրավիճակները կարող են նշանակել, որ բռնություն գործադրողները պատասխանատվության չեն ենթարկվում: (ՄԱԿ ԲՀ, 2015թ.)

Գենդերային հավասարություն. հասկացություն, որը նշանակում է, որ կանայք և տղամարդիկ, աղջիկները և տղաներն ունեն հավասար պայմաններ, նրանց նկատմամբ վերաբերմունք և հնարավորություններ՝ իրենց ամբողջ ներուժը, մարդու իրավունքներն ու արժանապատվությունն իրացնելու և տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական զարգացմանը նպաստելու (և դրանից օգուտ քաղելու) համար: Գենդերային հավասարությունը հասարակության կողմից տղամարդկանց և կանանց նմանությունների ու տարբերությունների և նրանց դերերի հավասար գնահատումն է. այն հիմնված է այն փաստի վրա, որ կանայք և տղամարդիկ լիարժեք գործընկերներ են տանը, համայնքում և հասարակության մեջ:

Գենդերային ապատեղեկատվություն. կանանց նկատմամբ կնատյատության հիմքով բռնարարքի և բռնության ենթատեսակ, որն օգտագործում է գենդերի և սեռի հիմքով կեղծ կամ ապակողմնորոշող պատմություններ, հաճախ որոշակի համակարգվածությամբ՝ կանանց հասարակական կյանքին մասնակցությունից զերծ պահելու համար:

Գենդերային առումով ներառական (կամ չեզոք) լեզու. ոչ սեքսիստական լեզվի, ներառական լեզվի և գենդերային առումով արդար լեզվի գործածում: Գենդերային առումով չեզոք լեզվի նպատակն է խուսափել այնպիսի բառերի ընտրությունից, որոնք կարող են մեկնաբանվել որպես կանխակալ, խտրական կամ նվաստացուցիչ այն ենթադրությամբ, որ մի սեռը կամ գենդերը նորմա է, իսկ մյուսը՝ ոչ: Գենդերային առումով արդար և ներառական լեզվի գործածումն օգնում է նաև նվազեցնել գենդերային կարծրատիպերը, խթանում է սոցիալական վերափոխումը և նպաստում է գենդերային հավասարության հասնելուն:

Առնականություն/կանացիություն. առօրյա լեզվում գործածվող սոցիալ-մշակութային կատեգորիաներ, որոնք մշակույթում վերագրվում են «կանացի» կամ «առնական» համարվող վարքագծերի և գործելակերպերի որոշ տեսակների՝ անկախ այն հանգամանքից, թե որ կենսաբանական սեռն է դրանք արտահայտում: Այդ հասկացությունները յուրացվում են և չեն նկարագրում սեռական կողմնորոշումը կամ կենսաբանական էությունը: Դրանք փոխվում են մշակույթի, կրոնի, դասակարգի, ժամանակի ընթացքում և անհատների ու այլ գործոնների հետ: Կանացիության և առնականության վրա դրված արժեքները նույնպես տարբերվում են՝ կախված մշակույթից: Ցանկացած մարդ կարող է դրսևորել կանացիության և առնականության ձևեր: Օրինակ՝ տղամարդը կարող է զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը հաճախ ըստ կարծրատիպերի համարվում է «կանացի» գործունեություն, ինչպիսին է հիվանդ ծնողին խնամելը կամ երեխաներին մեծացնելու համար տանը մնալը:

Սեռ. ծննդյան ժամանակ որոշված կենսաբանական բնութագրեր:

Սեքսիզմ. ցանկացած գործողություն, ժեստ, տեսողական արտահայտում, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ վարքագիծ, որը հիմնված է այն գաղափարի վրա, որ անձը կամ անձանց խումբը ստորադաս է իր սեռի պատճառով, ինչը տեղի է ունենում հանրային կամ մասնավոր ոլորտում՝ լինի առցանց, թե անցանց՝ նպատակ կամ ազդեցություն ունենալով՝ i. խախտել անձի կամ անձանց խմբին բնորոշ արժանապատվությունը կամ իրավունքները. կամ ii. անձին կամ անձանց խմբին պատճառել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնաս կամ տառապանք. կամ iii. ստեղծել ահաբեկող, թշնամական, նվաստացնող, ստորացուցիչ կամ վիրավորական միջավայր. կամ iv. խոչընդոտել անձի կամ անձանց խմբի կողմից ինքնավարությանը և մարդու իրավունքների լիարժեք իրականացմանը. կամ v. պահպանել և ամրապնդել գենդերային կարծրատիպերը: (Եվրոպայի խորհուրդ, 2019թ.)

Սեքսիստական լեզու. լեզու, որը բացառում է մեկ կամ մյուս սեռը, կամ ենթադրում է մի սեռի գերադաս լինելը մյուսի նկատմամբ: Սեքսիստական լեզուն գործածվում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց կողմից:

Կարծրատիպեր. մարդկանց կոնկրետ խմբի կամ կատեգորիայի վերաբերյալ ընդհանրացված համոզմունքներ: Դրանք հաճախ չափազանց ընդհանրացված և ոչ ճշգրիտ են՝ արտացոլելով կոնկրետ խմբին պատկանող անձի վերաբերյալ ունեցած ակնկալիքները: Դրանք լայնորեն տարածված են և փոխանցվում ու ամրապնդվում են հասարակության կառուցվածքի՝ ընտանիքի, դպրոցի, եկեղեցու և/կամ լրատվամիջոցների կողմից:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ. ԻՆՉ ԵՎ ԻՆՉՈՒ

Գենդերազգայուն լուսաբանում նշանակում է կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցներում, ինչպես նաև կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը ոչ կարծրատիպային, ոչ խտրական և ոչ սեքսիստական լույսի ներքո: Գենդերազգայուն լուսաբանման համար կարևոր է ոչ միայն, թե *քանի կին է* ներկայացված, այլև թե *ինչպես են կանայք* ներկայացված: Դրանով հավասարապես ճանաչվում և շեշտադրվում են կանանց ու տղամարդկանց սոցիալական և մասնագիտական ձեռքբերումները, առաջխաղացումները, շահերն ու դերերը:

Քանի որ լրատվամիջոցները քննարկումներն իրականացնում են հասարակական կարծիքի վրա ներազդող եղանակներով, դրանք մեծ վերահսկողություն ունեն գենդերի, այդ թվում՝ նորմերի, դերերի և կարծրատիպերի մեր ընկալումների վրա: Գենդերային այն նորմերը կամ հասարակական ակնկալիքներն ու չափանիշները, որոնցով որոշվում է, թե ինչպես մարդիկ պետք է իրենց դրսևորեն և կատարեն ներհատուկ դերեր՝ ելնելով իրենց գենդերի ընկալումից, վճռորոշ դերակատարություն ունեն հասարակությունում իշխանության բաշխման հարցում:

Որպես կանոն՝ գենդերային խնդիրներն անտեսված են լրագրողների մեծ մասի կողմից, և լրատվամիջոցներով արտացոլվող աշխարհն ամրապնդում է առնականության և կանացիության մասին կարծրատիպերը: Կանայք կազմում են գլոբալ բնակչության կեսից ավելին, սակայն նրանց անդրադարձ կատարվում է բոլոր հաղորդումների միայն մեկ քառորդում, մինչդեռ նրանց պատմությունները հաճախ արտացոլում են ուժեղ գենդերային կարծրատիպեր (Մաչարիա, խմբագիր, 2020թ.): Ընդհանուր առմամբ լրատվամիջոցներով կանայք հաճախ օգտագործվում են որպես «տղամարդկանց պահանջարկը» բավարարելու գործիք, ինչպես երևում է գովազդներում կանանց կանոնավոր ապրանքայնացումից:

Գենդերային ոչ զգայուն լրագրությունը տեղի է ունենում, երբ լրատվամիջոցների կողմից լուսաբանման ժամանակ ամրապնդվում են կարծրատիպերը, կանխակալությունը կամ մարգինալացվում են որոշ գենդերներ: Այն ներառում է հետևյալը.

- **գենդերային կարծրատիպերի վերագրում**. այն հոդվածները, որոնք կանանց ներկայացնում են միայն որպես խնամողների կամ տղամարդկանց՝ միայն որպես կերակրողների, ամրապնդում են ավանդական գենդերային դերերն ու անտեսում յուրաքանչյուր գենդերում փորձառությունների բազմազանությունը.
- **լեզվական կանխակալությունը**. գենդերային նորմերն ամրապնդող կամ որոշ գենդերներ բացառող լեզվի գործածումը կարող է անպատշաճ լինել: Օրինակ՝ «մենեջերի» համար «նա [he, արական սեռ]» դերանունը լռելյայն օգտագործելը կամ «քարտուղարի» համար նա [she, իգական սեռ] դերանունը լռելյայն օգտագործելը կամ պաշտոնի անվանումներում գենդերային առումով չեզոք «businessperson» բառի փոխարեն «businessman» բառն օգտագործելը: Տղամարդուն որպես ընդհանուր նորմա ներկայացնելով՝ այն խթանում է կանանց անտեսումն ու անտեսանելիությունը.
- **քիչ ներկայացվածություն.** երբ լրատվամիջոցներով մի սեռը պարբերաբար ավելի շատ է ներկայացվում, քան մյուսը, այն ամրապնդում է այն գաղափարը, որ որոշ կարծիքներ ու տեսակետներ ավելի արժեքավոր կամ կարևոր են, քան մյուսները: Սա կարող է հանգեցնել կանանց, ոչ բինար անձանց և այլ գենդերային փոքրամասնությունների մարգինալացմանը.
- **գենդերի հիմքով բռնությունը սենսացիա դարձնելը.** գենդերային բռնության վերաբերյալ սենսացիոն լուսաբանումը կարող է լինել ոչ միայն անպատշաճ, այլև վնասաբեր, եթե արմատական պատճառները վերացնելու կամ բռնության զոհերին/վերապրածներին հարգալից աջակցություն ցուցաբերելու փոխարեն շեշտը դրվում է նրանց մասին պատկերավոր մանրամասների կամ նրանց մեղադրող պատմությունների վրա:

Ի հակադրություն դրան՝ գենդերազգայուն լուսաբանումը խուսափում է կանանց և տղամարդկանց սահմանափակող ու տրիվիալացնող կարծրատիպերից՝ աշխարհն ու դրա հնարավորությունները ճշգրիտ ներկայացնելու համար: Թեև դժվար է դիմակայել համատարած, սովորական կարծրատիպերին, որոնք կանանց դիտարկում են որպես երեխաների խնամող կամ սեռական օբյեկտ, այնուամենայնիվ, լրագրության համար չափազանց կարևոր է ապահովել այնպիսի ամբողջական և բազմազան լուսաբանում, որը ճշգրիտ կերպով արտացոլում է մեր հասարակությունները: Կարծրատիպերը մտավոր արգելք են ոչ միայն այն առումով, թե հասարակությունն ինչ կարող է ակնկալել կանանցից և տղամարդկանցից, այլ նաև, որն առավել կարևոր է՝ ինչ կարող են ակնկալել կանայք և տղամարդիկ իրենք իրենցից: Այսպիսով, չափազանց կարևոր է պայքարել գենդերային կանխակալության դեմ ու նպաստել կանանց և տղամարդկանց առավել արդար ներկայացվածությանը:

Գենդերազգայուն լուսաբանումը՝

▶ **խթանում է հավասարությունն ու արդարությունը.** ապահովելով հավասարակշռված ներկայացվածություն և խուսափելով կարծրատիպերից՝ գենդերազգայուն լուսաբանումն օգնում է խթանել գենդերային հավասարությունը: Այն պայքարում է խտրական նորմերի և գործելակերպի դեմ՝ ստեղծելով առավել արդար և ազնիվ հասարակություն.

▶ **ապահովում է ճշգրիտ ներկայացվածություն.** այն տալիս է հասարակության առավել ճշգրիտ և համապարփակ պատկեր: Տարբեր կարծիքների ու տեսանկյունների առկայությունն ապահովում է, որ լրատվամիջոցները ներկայացնեն ոչ միայն գերիշխող կամ ավանդական հզոր գենդերների, այլ բոլոր գենդերների փորձառությունն ու ներդրումը.

▶ **պայքարում է կարծրատիպերի դեմ**. խուսափելով կարծրատիպերից և պայքարելով դրանց դեմ՝ գենդերազգայուն լուսաբանումն օգնում է արմատախիլ անել վնասաբեր գենդերային նորմերը: Սա օգնում է վերացնել այն խոչընդոտները, որոնք սահմանափակում են մարդկանց հնարավորությունները՝ ըստ իրենց գենդերի: Կանայք վիրաբույժներ, ֆուտբոլիստներ և ոստիկաններ են. նրանք ծառայում են բանակում, վարում ավտոբուս, աշխատում հանքերում և ճամփորդում են տիեզերքում որպես տիեզերագնացներ: Նույն կերպ, տղամարդիկ կարող են աշխատել մանկապարտեզում, լինել կրտսեր բուժաշխատող հիվանդանոցներում և խնամել իրենց երեխաներին: Լրատվամիջոցներով կարծրատիպերի դեմ պայքարելը նշանակում է այդպիսի մասնագիտություններում տղամարդկանց և կանանց ներկայացնելը, հասարակության մեջ արդեն գոյություն ունեցող մոդելները հակապատկերելն ու տղաների և աղջիկների համար օրինակներ ապահովելը.

▶ **ընդլայնում է մարգինալացված խմբերի իրավունքներն ու հնարավորությունները**. կանանց և այլ մարգինալացված գենդերների վրա անհամաչափորեն ազդող խնդիրները տեսանելի դարձնելը կարող է ընդլայնել այդ խմբերի իրավունքներն ու հնարավորությունները՝ նրանց ապրումներն ու հաջողությունները շեշտադրելու միջոցով: Սա կարող է նպաստել գործողությունների ձեռնարկմանը և բերել փոփոխություններ: Փոքրամասնություններին պատկանող կանայք ավելի քիչ են ներկայացված հասարակական կյանքում և նույնիսկ ավելի քիչ են լուսաբանվում լրատվամիջոցներով. նրանց դերի ու աշխատանքի վրա ուշադրության կենտրոնացումն է ապահովում հասարակության ճշգրիտ ներկայացվածությունը.

▶ **կրթում է.** հասարակական կարծիքի և հասարակական նորմերի ձևավորման գործում լրատվամիջոցներն ունեն հզոր դերակատարություն: Գենդերազգայուն լուսաբանումը կրթում է լսարանին գենդերային խնդիրների մասին՝ բարձրացնելով իրազեկվածության մակարդակը և խթանելով փոխըմբռնումն ու կարեկցանքը: Այն նաև հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ և համապարփակ ներկայացնել հասարակությունը.

▶ **պատասխանատու է.** գենդերազգայուն լուսաբանումը համահունչ է էթիկական լրագրության արդարության, ճշգրտության և հաշվետվողականության սկզբունքներին՝ ձգտելով լուրերը ներկայացնել այնպես, որպեսզի դրանք զերծ լինեն կանխակալությունից և նախապաշարմունքներից.

▶ **խթանում է դրական սոցիալական վերափոխումը**. գենդերային անարդարությունների շեշտադրումը և գենդերային հավասարության քարոզչությունը կարող են նպաստել սոցիալական վերափոխմանը: Գենդերային խնդիրների վերաբերյալ լուսաբանումը կարող է ազդել քաղաքականության վրա, նպաստել ակտիվությանը և հանգեցնել հասարակական բարեփոխումների.

▶ **ընդլայնում է տեսակետները**. լրատվամիջոցներում բազմազան ներկայացվածությունն օգնում է ընդլայնել լսարանի տեսակետները՝ խրախուսելով նրանց գենդերային խնդիրների շուրջ քննադատական մտածողություն ցուցաբերել և վիճարկել սեփական համոզմունքներն ու ենթադրությունները:

Ընդհանուր առմամբ, գենդերազգայուն լուսաբանումը չափազանց կարևոր է՝ առավել ներառական, արդար և տեղեկացված հասարակություն ստեղծելու համար: Այն ոչ միայն բարձրացնում է լրագրության որակը, այլ էապես նպաստում է սոցիալական արդարության ու հավասարության առավել լայն նպատակների իրագործմանը:

Ընդհանուր պատմությունների վերաբերյալ գենդերազգայուն դիտանկյունները

Չափազանց շատ են այն մեդիա պատմությունները, որոնք կարելի է մեկնաբանել գենդերային ոսպնյակի միջոցով: Ստորև ներկայացված են ընդհանուր մեդիա թեմաների առնչությամբ մի շարք առաջարկություններ.

Բառերի ընտրությունը կարևոր է՝ գենդեր և սեռ

«Գենդեր» և «սեռ» եզրույթները հաճախ օգտագործվում են փոխադարձաբար, սակայն դրանք վերաբերում են տարբեր հասկացությունների: Սեռը վերաբերում է արական և իգական մարմինների միջև տարբերակում մտցնող կենսաբանական բնութագրիչներին: Տղամարդկանց և կանանց բնորոշ հորմոնների մակարդակի, գենետիկայի և սեռական օրգանների միջև առկա են առանցքային տարբերություններ: Արական և իգական սեռի կենսաբանական բնութագրիչները նույնն են բոլոր մշակույթներում և հասարակություններում:

Գենդերն ընդհակառակը կենսաբանորեն չի որոշվում, այլ կառուցվում է հասարակության և անհատների կողմից: Այն վերաբերում է տվյալ հասարակության կողմից կանանց ու տղամարդկանց և այլ գենդերային ինքնությունների համար պատշաճ համարվող սոցիալական դերերին, վարքագծի տիպերին, գործունեության տեսակներին, ինչպես նաև վերաբերմունքին, զգացմունքներին և վարքագծի տիպերին, որոնք մշակույթը կապում է մարդու կենսաբանական սեռի հետ:

Այնուամենայնիվ, առնական և կանացի լինելու հետ կապված տղամարդկանց և կանանց դիրքորոշումներն ու ակնկալիքները կախված են սոցիալական ու մշակութային համատեքստերից և դոգմատիկ չեն: Սա նշանակում է, որ գենդերի ընկալումները մշտապես զարգանում են և կարող են զգալիորեն տարբերվել՝ կախված մշակույթներից, երկրներից և սերունդներից:

Օրինակ, շատ հասարակություններում կանանց վերագրվում են տնային տնտեսությամբ զբաղվելու և երեխաներին դաստիարակելու պարտականություններ, իսկ տղամարդկանց վրա առավել մեծ ճնշումներ են գործադրվում, որպեսզի վերջիններս գումար վաստակեն՝ ընտանիքի կարիքները հոգալու համար, մինչդեռ հակառակը չի խրախուսվում: Կանայք կարող են դիտվել որպես զգայուն և հոգատար, իսկ տղամարդիկ ընկալվում են որպես ուժեղ սեռ: Կանայք կարող են աշխատել որպես մանկապարտեզի դաստիարակ, իսկ տղամարդիկ՝ ոչ: Այնուամենայնիվ, հաճախ հասարակության ակնկալիքները բախվում են իրականության հետ: Հայաստանի նման բարձր աշխատանքային միգրացիա ունեցող երկրներում շատ կանայք ներգրավված են ֆիզիկական ծանր գյուղատնտեսական աշխատանքներում, մինչդեռ նրանց ամուսիններն

աշխատում են արտերկրում՝ ցույց տալով, թե ինչպես հասարակությունները կարող են անտեսել իրենց կողմից ձևավորվող գենդերային նորմերը:

Այս տարբերակումը չափազանց կարևոր է գենդերային հավասարության, իրավունքների և ներառականության շուրջ քննարկումների համար, և լրատվամիջոցները կարող են էական դերակատարություն ունենալ այդ ոլորտում մարդկանց կրթելու գործում: Անդրադառնալով գենդերային հարաբերություններին և դրանց հիմքում ընկած ուժի բաշխվածությանը՝ մենք կարող ենք առավել լավ հասկանալ մարդկանց՝ ռեսուրսների հասանելիությունն ու դրանց բաշխումը, ինչպես նաև որոշումներ կայացնելու ու հասարակական կյանքին մասնակցելու նրանց կարողությունը:

Կարծրատիպերը և ներքին կանխակալությունը

Կարծրատիպերը՝ մարդկանց կոնկրետ խմբի վերաբերյալ լայնորեն տարածված, սակայն չափազանց պարզեցված ու ընդհանրացված համոզմունքներն ու գաղափարներն են: Դրանք հաճախ ճշգրիտ չեն արտացոլում իրականությունը և կարող են հանգեցնել անարդար ենթադրությունների և դատողությունների: Գենդերային կարծրատիպերը, այն է՝ կանանց և տղամարդկանց տարբեր կարողությունների մասին լայնորեն տարածված համոզմունքներն ընկած են գենդերային անհավասարության հիմքում:

Ներքին կանխակալությունը կամ չգիտակցված կանխակալությունն առնչվում է վերաբերմունքի տիպերին կամ կարծրատիպերին, որոնք անգիտակցաբար ազդում են մեր ընկալումների, գործողությունների և որոշումների վրա: Ի տարբերություն գիտակցված կանխակալության, որը դիտավորյալ և գիտակցված է, չգիտակցված կողմնակալությունն աշխատում է գիտակցական մակարդակից դուրս և կարող է ազդել վարքագծի վրա՝ առանց միտումնավոր վերահսկողության: Չգիտակցված կողմնակալություններն ավտոմատ են և հաճախ գործում են անձի գիտակցականից անկախ: Յուրաքանչյուր մարդ ունի չգիտակցված կանխակալություններ, քանի որ դրանք բխում են մշակութային պայմաններից, լրատվամիջոցների ազդեցությունից և անձնական փորձից: Այդ կանխակալությունները կարող են ազդել այլոց հետ մեր փոխհարաբերությունների, մեր կայացրած որոշումների և մեր կայացրած դատողությունների վրա:

Ինչ վերաբերում է գենդերին՝ կարծրատիպերը հաճախ ձևավորում են տղամարդկանց և կանանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև այն, թե ինչի նրանք կարող են հասնել կյանքում: Այդ կարծրատիպերի վրա հիմնված ներքին կանխակալությունն այնուհետև հանգեցնում է գենդերային դերերի վերաբերյալ որոշումների կայացմանը, որոնք սահմանափակում են գենդերային հավասարությունը:

Ներքին գենդերային կանխակալություն նշանակում է, որ աղջիկները ցանկալի չէ, որ զբաղվեն տղաների հետ ավանդաբար ասոցացվող այնպիսի սպորտաձևերով, ինչպիսիք են ֆուտբոլը, ռեգբին կամ բռնցքամարտը, կամ զբաղվեն այնպիսի առարկաներով, ինչպիսիք են մաթեմատիկան և գիտությունն այն ենթադրությամբ, որ նրանք ավելի շատ հաջողություններ ունեն արվեստի և հումանիտար գիտությունների ոլորտում: Աշխատանքային միջավայրերում կանանց կարող են չվստահել ղեկավար պաշտոններ այն անգիտակից համոզմունքի պատճառով, որ տղամարդիկ ավելի հեղինակավոր և վճռական են, և վարձու մենեջերները կարծում են, որ վերարտադրողական տարիքի կանայք ավելի քիչ են նվիրված իրենց կարիերային, քանի որ նրանք կարող են առաջնահերթություն տալ ընտանեկան պարտականություններին, ինչը հանգեցնում է կանխակալության՝ աշխատանքի ընդունելու կամ պաշտոնը բարձրացնելու ժամանակ:

Գործնական մաս. ինչ է պետք անել, իսկ ինչը՝ ոչ

Գործածեք ներառական լեզու: Գործածեք կանխակալությունից, կարծրատիպերից և խտրականությունից զերծ լեզու: Այն խուսափում է սեքսիստական բառերից և ապահովում է, որ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ներկայացված լինեն արդար ձևով: Հնարավորության դեպքում գործածեք գենդերային առումով չեզոք լեզու՝ առանց նշելու գենդերը: Մասնագիտությունները տալիս են գենդերային առումով չեզոք լեզվի կոնկրետ համապատասխան օրինակներ՝ «policeman» բառի փոխարեն գործածեք «police officer» բառը, «chairman» բառի փոխարեն՝ «chairperson» բառը, «barman» բառի փոխարեն՝ «bartender» բառը, «serviceman» բառի փոխարեն՝ «soldier» բառը: «Mankind» բառի փոխարեն գործածեք «humankind» բառը:

Ապահովեք հավասարակշռված ներկայացուցչություն: Նորություններում ապահովեք տղամարդկանց և կանանց հավասար ներկայացվածություն, այդ թվում՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, փորձագետներ և սուբյեկտներ: Փնտրեք տեղեկատվության բազմազան աղբյուրներ և կարծիքներ, այդ թվում՝ հարցազրույցներում և պատմություններում կանանց, տղամարդկանց, տրանսգենդեր անձանց և ոչ բինար անձանց՝ հարցերի վերաբերյալ առավել համապարփակ տեսակետ ապահովելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴ. Շեշտադրեք տարբեր ոլորտներում կանանց ձեռքբերումներն ու ներդրումները՝ հավասարակշռություն ապահովելու համար: Օրինակ՝ պատվաստանյութերի լուսաբանման ժամանակ հարցազրույց վերցրեք կին հետազոտողներից, տիեզերական առաքելությունների մասին հաղորդումներ պատրաստելիս՝ կին տիեզերագնացներից կամ արհեստական բանականության ոլորտում զարգացումները լուսաբանելիս՝ SS ոլորտի կին մասնագետներից:

Խուսափեք կարծրատիպերից: Սա նշանակում է վիճարկել ավանդական գենդերային դերերն ու ներկայացուցչությունները և տալ բոլոր գենդերների բազմազան ու իրատեսական պատկերներ: Օրինակ՝ փոխանակ ենթադրելու, որ խնամող կարող են լինել միայն կանայք կամ կերակրող կարող են լինել միայն տղամարդիկ, լրագրողները պետք է ներկայացնեն առավել բազմազան դերեր և պարտականություններ:

ԽՈՐՀՈՒՐԴ. Ճանաչեք ձեր սեփական կանխակալությունները և հակազդեք դրանց: Լրագրողները սեփական փորձ, աշխարհայացք և չգիտակցված կանխակալություններ ունեցող անձինք են: Ձեր սեփական գենդերային կանխակալությունը ճանաչելն առաջին քայլն է ձեր լուսաբանման վրա դրանց ազդեցությանը հակազդելու համար: Օրինակ՝ լայնամասշտաբ ենթակառուցվածքի կառուցումը լուսաբանելիս հարցազրույց վերցրեք կին ինժեներից: Եթե լուսաբանում եք ֆուտբոլային մրցաշարի մասին, ապա դիմեք կին մրցավարի: Այս մասնագետներին առաջին պլան մղելով՝ լրագրողները ճշգրիտ կերպով ներկայացնում են հասարակությունը և նպաստում են կարծրատիպերի դեմ պայքարին:

Եղեք զգայուն գենդերային հարցերի նկատմամբ: Հասկացեք և լուծեք մեկ գենդերի վրա անհամաչափորեն ազդող խնդիրները, ինչպիսիք են կանանց նկատմամբ բռնությունը, վարձատրության գենդերային տարբերությունները և վերարտադրողական իրավունքները: Սա ներառում է նաև սոցիալական, տնտեսական և քաղաքական համատեքստերը հասկանալը, որոնք տարբեր գենդերների վրա տարբեր կերպ են ազդում:

Խուսափեք գենդերային բռնությունը սենսացիա դարձնելուց: Ընտանեկան բռնության, սեռական բռնության կամ ոտնձգության մասին հարցերը լուսաբանելիս լրագրողները պետք է խուսափեն զոհերին մեղադրելուց, խնդիրը սենսացիա դարձնելուց և բռնության մասին հիվանդագին պատմություններ ներկայացնելուց: Տրամադրեք աջակցություն և շեշտադրեք բռնություն գործադրած անձին պատասխանատվության ենթարկելու կարևորությունը:

ԽՈՐՀՈՒՐԴ. Գործածեք հստակ ձևակերպումներ, որոնք չեն մեղադրում բռնություն վերապրածին/զոհին, այլ ավելի շուտ շեշտադրում են բռնություն գործադրած անձի պատասխանատվությունը, որը դրա ամբողջական և բացարձակ պատասխանատուն է: Խուսափեք ցանկացած լեզվից, որը կամ անուղղակիորեն, կամ ուղղակիորեն կասկածի տակ է դնում զոհի վարքագիծը, որը կարող էր «հրահրած լինել բռնություն գործադրած անձին»: Խուսափեք արարքն արդարացնող խոսքեր գործածելուց («Տղամարդը սպանել է իր կնոջը, նա շատ էր սիրում նրան») կամ բռնությունը կապել բռնություն վերապրածի վարքագծի («Բռնաբարությունից ենթադրյալ տուժածը խմել է առնվազն չորս բաժակ օղի»), հագուստի («Նրա զգեստը չափազանց սեքսուալ էր. տղամարդը հարվածել է զուգընկերոջը փողոցում», «Հայտնաբերվել է կարմիր բարձրակրունկ կոշիկներ հագած կնոջ դին»), զուգընկերոջ փոփոխության կամ որևէ այլ անձնական բնութագրիչի հետ:

Պայքարեք գենդերային նորմերի դեմ: Լուսաբանեք գենդերային նորմերի դեմ պայքարող և գենդերային հավասարության ուղղությամբ աշխատող նախաձեռնությունների, անձանց և կազմակերպությունների մասին: Փոփոխություն բերելու դրական օրինակների շեշտադրումը կարող է ոգեշնչել այլոց և նպաստել հասարակական վերաբերմունքի փոփոխությանը:

Մարգինալացված գենդերների իրավունքների պաշտպանությունը և նրանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը: Սա կարող է ներառել գենդերային անարդարությունների և խտրականության առնչությամբ հետաքննական լուսաբանումը՝ սկսած վարձատրության, սպորտում անհավասարությունից և այլն:

Տրամադրեք համատեքստ: Իրադարձությունները կամ հարցերը մեկուսի ներկայացնելու փոխարեն ավելի շուտ ներկացարեք այլ գենդերի վրա դրանց թողած հետևանքները: Սա օգնում է լսարանին հասկանալ գենդերային անհավասարության համակարգային բնույթը:

Ներառեք տարբեր տեսանկյուններ: Ներկայացրեք տարբեր գենդերներից հատկապես նրանց կարծիքներն ու տեսակետները, որոնք հիմնական լրատվամիջոցներում հաճախ քիչ են ներկայացված կամ մարգինալացված են: Ներկայացրեք պատմություններ, որոնց ժամանակ ուսումնասիրվում են գենդերային ինքնության և արտահայտման տարբեր փորձառություններ: Սա կարող է ներառել տրանսգենդերների նկարագրերը, ոչ բինար ինքնություններ ունեցող անձանց վերաբերյալ քննարկումները կամ ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների հետ կապված հարցերի լուսաբանումը:

Խորհրդակցեք գենդերային հարցերով փորձագետների հետ. գենդերային հայեցակետեր ներառող պատմություններ լուսաբանելիս դիմեք գենդերային հարցերով փորձագետների կամ գենդերային հավասարության հարցերով զբաղվող կազմակերպությունների: Սա կարող է օգնել լուսաբանման գործընթացում ապահովել ճշգրտություն և զգայունություն:

Տվյալները և հետազոտությունը. օգտագործեք տվյալներ և հետազոտություններ, որոնք տարանջատում են տեղեկություններն ըստ գենդերի՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցերի մասին առավել խոր պատկերացում ապահովելու համար: Վերլուծեք, թե ինչպես է գենդերը հատվում հասարակության տարբեր հայեցակետերի հետ և շեշտադրեք անհավասարությունները, եթե դրանք առկա են:

Տրանսգենդերների հարցերի վերաբերյալ զգայուն լուսաբանումը. տրանսգենդեր անձանց վերաբերյալ լուսաբանելիս հարգեք նրանց ընտրած անունն ու դերանունները: Խուսափեք կենտրոնանալ միայն նրանց տրասնգենդեր դառնալու գործընթացի վրա և փոխարենը շեշտադրեք նրանց ձեռքբերումները, խնդիրները և հասարակության մեջ ունեցած ներդրումները:

Էթիկական լուսաբանումը

Լրագրողական էթիկան այն սկզբունքների համալիր է, որոնցով սահմանվում են լրատվամիջոցներում աշխատող լրագրողների, խմբագիրների և այլոց ազնիվ վարքագծի կանոնները: Էթիկական լրագրությունը հասարակություններին հնարավորություն է տալիս փոխանակել տեղեկություններ՝ ճշգրիտ, արդար և մանրակրկիտ ձևով: Էթիկական լրագրության հիմնական սկզբունքները կատարելը շատ կարևոր է, որպեսզի լրատվամիջոցները կարողանան պահպանել իրենց հեղինակությունը և հանրային վստահությունը:

Ճշգրտությունը և ճշմարտացիությունը: Լրագրողները պետք է ապահովեն, որ բոլոր տեղեկությունները լինեն ճշգրիտ, ստուգված և ներկայացվեն ճշմարտացիորեն, ինչպես նաև օպերատիվ կերպ շտկեն ցանկացած սխալ կամ անճշտություն՝ արժանահավատությունը պահպանելու համար:

Արդարությունը և անաչառությունը: Լրագրողները պետք է լինեն հավասարակշռված, ներկայացնեն պատմության բոլոր համապատասխան կողմերն առանց կողմնակալության և խուսափեն շահերի բախումից:

Հաշվետվողականությունը: Լրագրողները պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց աշխատանքի համար ու պատրաստ լինեն բացատրելու և արդարացնելու իրենց գործողությունները: Նրանք պետք է նաև լինեն թափանցիկ՝ տեղեկություններ հավաքագրելու համար օգտագործած աղբյուրների և մեթոդների հարցում:

Վնասը նվազագույնի հասցնելը: Լրագրողները պետք է հաշվի առնեն անձանց ու համայնքների վրա լուսաբանման ազդեցությունը և հարգեն անձանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը, հատկապես այն դեպքերում, երբ դրանք վերաբերում են խոցելի կամ վիշտ ունեցող մարդկանց:

Անկախությունը: Լրագրողները պետք է անկախություն պահպանեն այն անձանցից, ում լուսաբանում են, այդ թվում՝ զերծ մնան քաղաքական, առևտրային և հատուկ շահերից: Նրանք պետք է նաև ապահովեն,

որ արտաքին շահերը կամ ճնշումները չազդեն խմբագրական որոշումների վրա:

Մարդասիրությունը և հարգանքը: Լրագրողները պետք է բոլոր մարդկանց վերաբերվեն հարգանքով և արժանապատվությամբ: Նրանք պետք է խուսափեն կարծրատիպերի ամրապնդումից և ապահովեն տարբեր տեսակետների ներկայացումը:

Տեղեկատվության աղբյուրի հարցում թափանցիկությունը: Լրագրողները պետք է նշեն տեղեկատվության հավաստի աղբյուրները և հստակեցնեն, թե երբ այն չի կարող ինքնուրույն ստուգվել: Նրանք պետք է նաև պաշտպանեն գաղտնի աղբյուրների ինքնությունը՝ դրանց անվտանգությունն ու վստահությունն ապահովելու համար:

Ազնվությունը: Լրագրողները պետք է խուսափեն գրագողությունից և միշտ հղում կատարեն սկզբնական աղբյուրներին: Նրանք երբեք չպետք է շահարկեն պատկերները, ձայնագրությունները կամ տեսանյութերը՝ լսարանին մոլորեցնելու համար:

Սեռական և գենդերային բռնության վերաբերյալ լուսաբանումը

Սեռական և գենդերային բռնության (ՍԳԲ) վերաբերյալ լուսաբանումը պահանջում է զգայունություն, ճշգրտություն և դրանց հիմքում ընկած բարդությունների վերաբերյալ խոր պատկերացում: Լրագրողները վճռորոշ դերակատարություն ունեն հանրային ընկալումների ձևավորման և քաղաքականության փոփոխությունների վրա ազդելու հարցում, ինչն ընդգծում է էթիկական չափանիշներին և լավագույն գործելակերպերին հետևելու կարևորությունը: Ստորև ներկայացված է ՍԳԲ-ն լուսաբանող լրագրողների համար նախատեսված առանցքային ուղեցույցը:

Էթիկական նկատառումները

Գաղտնիություն և անանունություն

- Պաշտպանեք բռնություն վերապրածների ինքնությունը. օգտագործեք կեղծանուններ և խուսափեք այնպիսի մանրամասների բացահայտումից, որոնք կարող են հանգեցնել բռնություն վերապրածների նույնականացմանը:
- Ստացեք տեղեկացված համաձայնություն. համոզվեք, որ բռնություն վերապրածները հասկանում են, թե ինչպես են իրենց տեղեկություններն օգտագործվելու և ստացեք նրանց պատմությունները հրապարակելու համար հստակ համաձայնություն:

Զգայունություն և հարգանք

- Հարգեք բռնություն վերապրածների արժանապատվությունը. խուսափեք պատմությունը սենսացիա դարձնելուց կամ բռնության պատկերավոր մանրամասները շեշտադրելուց:
- Կիրառեք տրավմաների մասին տեղեկացված մոտեցումներ[1]. ուշադրություն դարձրեք այն հոգեբանական ազդեցություններին, որ իրենց փորձառությունները պատմելը կարող է թողնել բռնություն վերապրածների վրա: Հարկ եղած դեպքում նրանց տրամադրեք աջակցություն:

Խուսափեք բռնության զոհերին մեղադրելուց

- Լեզուն կարևոր է. գործածեք այնպիսի լեզու, որով բռնություն վերապրածին չեք մեղադրի այն բռնության համար, որին նա ենթարկվել է: Կենտրոնացեք բռնություն գործադրած անձի գործողությունների վրա, այլ ոչ թե բռնություն վերապրածի վարքագծի վրա:
- Տվեք բռնության համատեքստը. ընդգծեք առավել լայն սոցիալական և համակարգային խնդիրները, որոնք նպաստում են ՍԳԲ-ին:

Չափազանց կարևոր է, որ լրագրողները խուսափեն հարձակումների նշանակությունը նվազագույնի հասցնելուց, դրանք նսեմացնելուց կամ բռնություն գործադրած անձի գործողություններն արդարացնելուց: Հայաստանյան լրատվամիջոցների վերլուծությունը ցույց է տալիս այնպիսի դեպքերի մասին հաղորդումներ, երբ բռնության զոհը ծեծի է ենթարկվել «...պատճառով». այս պարզ բառն արդարացնում է բռնությունը և լեգիտիմացնում այն՝ նպաստելով այն վերահաստատող նարատիվներին: Նույն կերպ, բռնության վերաբերյալ մանրամասները ներկայացնելը, որոնք թույլ են տալիս նույնականացնել բռնության զոհին, ունեն կրկնակի հետևանք, որն է՝ նվաստացնել կնոջ արժանապատվությունը և թույլ տալ նրա նույնականացումը:

Պատասխանատու լուսաբանումը

Ստուգեք փաստերը. համոզվեք, որ բոլոր տեղեկությունները ճշգրիտ են և հաստատված մի քանի վստահելի աղբյուրներով:

Հասկացեք իրավական համատեքստը. իմացեք այն տարածաշրջանում ՍԳԲ-ի իրավական սահմանումներն ու հետևանքները, որտեղից լուսաբանում եք իրականացնում:

Ընդլայնեք պատմությունները. լուսաբանեք ՍԳԲ-ի տարբեր հայեցակետերը, այդ թվում՝ դրա կանխարգելումը, աջակցության ծառայությունները, իրավական կարգավորումները և բռնություն վերապրածների պատմությունները:

Հաշվի առեք տարբեր տեսակետները. շեշտադրեք տարբեր գենդերների, տարիքների, էթնիկական պատկանելությունների և սոցիալ-տնտեսական դիրք ունեցող մարդկանց տեսակետները՝ հարցի համապարփակ պատկերը տալու համար:

1 Տրավմաների մասին տեղեկացված լրագրության շրջանակներում պատրաստվում են այն պատմությունների վերաբերյալ հաղորդումներ, որտեղ առկա է տրավմաների և բռնության զոհերի վրա դրանց ազդեցության մասին ընմբռնում՝ հաշվի առնելով բռնության զոհերի հոգեբանական և էմոցիոնալ կարիքները: Տե՛ս Հավելված 2-ը:

Ներկայացրեք աջակցության ծառայությունները. տեղեկություններ տրամադրեք բռնություն վերապրածներին օգնություն առաջարկող տեղական և ազգային կազմակերպությունների մասին:

Ներկայացրեք կանխարգելման ուղղությամբ գործադրվող ջանքերը. լուսաբանեք ՍԳԲ-ի կանխարգելմանն ու գենդերային հավասարության խթանմանն ուղղված նախաձեռնությունների և ծրագրերի մասին:

Ինչպես անցկացնել հարցազրույցը

Ստեղծեք վստահության մթնոլորտ

- Ստեղծեք ապահով միջավայր. հարցազրույցներն անցկացրեք ապահով և մասնավոր միջավայրում, որտեղ բռնություն վերապրածներն իրենց հարմարավետ կզգան:
- Եղեք համբերատար և կարեկցող. թույլ տվեք բռնություն վերապրածներին կիսվել իրենց պատմություններով՝ իրենց սեփական տեմպով և առանց ճնշում գործադրելու:

Օգտագործեք բաց հարցեր

- Խրախուսեք մանրամասն պատասխանները. տվեք այնպիսի հարցեր, որոնք թույլ են տալիս բռնություն վերապրածներին ամբողջությամբ արտահայտել իրենց փորձառություններն ու զգացմունքները, խուսափեք հուշող և «այո-ոչ» հարցերից:
- Լսեք ակտիվորեն. ցուցաբերեք ապրումակցում և հասկացողություն՝ ակտիվորեն լսելու միջոցով:

Ապահովեք նրանց հետո հետագա աշխատանքը

- Առաջարկեք աջակցություն ստանալու վերաբերյալ տեղեկություններ. տրամադրեք խորհրդատվություն և աջակցության ծառայություններ տրամադրող անձանց կոնտակտային տվյալները:
- Կրկին կապ հաստատեք. հարկ եղած դեպքում պահպանեք բռնություն վերապրածների հետ կապը՝ նրանց բարեկեցությունն ապահովելու և պատմության հետ կապված ցանկացած մտահոգություն փարատելու համար:

Իրավական և անվտանգության նկատառումները

Հասկացեք իրավական սահմանափակումները

- Իմացեք օրենքները. տեղյակ եղեք ՍԳԲ-ի դեպքերի լուսաբանման, այդ թվում՝ դրանց առնչությամբ ընթացող քննությունների կամ վարույթների հետ կապված իրավական սահմանափակումների մասին:
- Հարգեք չհրապարակայնացնելու մասին հրահանգները[2]. կատարեք տեղեկությունների տարածման առնչությամբ դատարանի կողմից սահմանված ցանկացած սահմանափակում:

Առաջնահերթություն տվեք անվտանգությանը

- Ապահովեք աղբյուրների անվտանգությունը. ձեռնարկեք միջոցներ՝ բռնություն վերապրածների և այլ աղբյուրների ֆիզիկական ու էմոցիոնալ անվտանգությունը պաշտպանելու համար.
- հաշվի առեք հետևանքները. մտածեք որոշ մանրամասների, հատկապես ՍԳԲ-ն մեծապես խարանող համայնքներում հրապարակման հնարավոր հետևանքների մասին:

Լրագրողները չափազանց կարևոր դերակատարություն ունեն սեռական և գենդերային բռնության հարցերի առնչությամբ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու և փոփոխություններ բերելու հարցում: Կատարելով էթիկական չափանիշները, կիրառելով զգայունություն և պատրաստելով համապարփակ ու ճշգրիտ հաղորդումներ՝ լրագրողները կարող են նպաստել առավել տեղեկացված և կարեկցող հասարակության ձևավորմանը: Այս մոտեցումը ոչ միայն հարգում ու պաշտպանում է բռնություն վերապրածներին, այլև կրթում է հանրությանը և աջակցում ՍԳԲ-ի դեմ պայքարի ջանքերին:

2 Չհրապարակայնացնելու մասին հրամանը վերաբերում է դատավորի այն որոշմանը, որով արգելվում է քննության փուլում գտնվող դատական գործում կամ քրեական վարույթում ներգրավված փաստաբաններին, կողմերին կամ վկաներին գործի մասին խոսել հանրության և (կամ) լրատվամիջոցների հետ:

Հակամարտություններից տուժած համայնքների վերաբերյալ լուսաբանումը. գենդերային մոտեցումը

Հակամարտությունը տարբեր կերպ է ազդում տղամարդկանց, կանանց, աղջիկների ու տղաների վրա, ինչը կարևոր է դարձնում գենդերային ոսպնյակի միջոցով հակամարտություններից տուժած համայնքների լուսաբանումը: Սա ենթադրում է լրագրողական արհեստավարժության հիմնական չափանիշների նկատմամբ հարգանք, որոնց համաձայն՝ անաչառ կերպ, արդար և հավասարակշռված համատեքստում ներկայացվում են ստուգված տեղեկություններ՝ թույլ տալով մարգինալացված դերակատարներին արտահայտել իրենց կարծիքը և խուսափելով գենդերային կարծրատիպերից:

Կին և աղջիկ փախստականները բախվում են իրենց գենդերի հետ կապված հատուկ խնդիրների: Դրանք ներառում են՝

- Նոր միջավայրին հարմարվելը: Նոր միջավայրում նոր կյանք սկսելը կարող է դժվար լինել բազմաթիվ պատճառներով՝ սկսած լեզվից և մշակույթից մինչև իրենց սոցիալական կապերի կորուստը, որը նրանք կարող էին կորցրած լինել: Գործողությունների կատարման նոր եղանակներին հարմարվելը կարող է թվացյալ պարզ բաները դարձնել շատ դժվար:

- Կրթության և աշխատաշուկայի հասանելիությունն ու մասնակցությունը: Դպրոցական տարիքի փախստականները կարող են ունենալ կրթություն ստանալու հետ կապված դժվարություններ՝ հաշվի առնելով լեզվի, կրթական համակարգի փոփոխություններն ու ընկերների բացակայությունը: Կին փախստականները կարող են հանդիպել լեզվական, իրենց որակավորումների և փորձի ճանաչման հետ կապված խոչընդոտների: Երկու խմբերն էլ բնակչության մեծամասնության կողմից կարող են ենթարկվել խտրականության և ոտնձգությունների:

- Ֆինանսական ռեսուրսների բացակայությունը: Կանայք գենդերային նորմերի, կերակրման պարտականությունների, հմտությունների և փորձի բացակայության և տնային տնտեսություններում խնամքի պարտականությունների պատճառով բախվում են աշխատանք գտնելու հետ կապված դժվարությունների: Աղջիկները նախընտրում են չշարունակել կրթությունը, քանի որ շատ հաճախ ցանկանում են սկսել գումար վաստակել և պահել իրենց ընտանիքը:

- Իրավական խոչընդոտները և փաստաթղթերը: Կանայք կարող են դժվարություններ ունենալ այնպիսի օրինական փաստաթղթեր ստանալու հարցում, ինչպիսիք են անձը հաստատող փաստաթղթերը, աշխատանքի թույլտվությունները կամ ապաստանի կարգավիճակը, հատկապես, եթե նրանք փախել են առանց տղամարդ հարազատների, որոնց մոտ ավանդաբար գտնվում են այդ փաստաթղթերը: Սա կարող է թույլ չտալ նրանց օգտվել ծառայություններից և իրավական պաշտպանությունից:

- Մեկուսացվածության և միայնության զգացումը: Կախված տարբեր դաստիարակություններից և իրենց համայնքների կողմից վերագրվող գենդերային դերերից՝ դեռահաս աղջիկ փախստականները կարող են դժվարություններ ունենալ ընկերական հարաբերություններ հաստատելու հարցում: Հին աջակցության շրջանակները կորցրած տարեց փախստականները կարող են դժվարություններ ունենալ նորերը զարգացնելու հարցում՝ հաճախ ժամանակ չանցկացնելով ընդունող բնակչության հետ:

- Մեղքի զգացումը: Շատ փախստականներ կարող են իրենց մեղավոր զգալ, որ փախել են այնպիսի իրավիճակներից, որոնցում կարող են մահացած լինել իրենց ընտանիքի անդամները, ընկերները և իրենց համայնքի մյուս ներկայացուցիչները: Նրանք կարող են մեղքի զգացում ունենալ սիրելիներից, հատկապես այդ իրավիճակում մնացած մարդկանցից բաժանվելու համար:

Միևնույն ժամանակ, լրատվամիջոցները շատ հաճախ լուսաբանում են կին փախստականների վերաբերյալ՝ նրանց ներկայացնելով որպես զոհեր՝ չշեշտադրելով այն ճկունությունն ու վճռականությունը, որոնք օգնել են նրանց գոյատևել:

Կին և աղջիկ փախստականների վերաբերյալ լուսաբանումը

Կին փախստականների վերաբերյալ պատշաճ լրագրողական լուսաբանումը ենթադրում է նրանց փորձառությունների և մարտահրավերների մանրամասն ու հարգալից ներկայացում՝ միևնույն ժամանակ շեշտադրելով նրանց կարողությունները, դիմացկունությունը և հյուրընկալող համայնքներում ունեցած ներդրումները:

Պատմությունների անհատականացումը: Կիսվեք կին փախստականների առանձին պատմություններով՝ նրանց փորձառություններն անհատականացնելու և դժվարությունների համատեքստում նրանց դիմացկունությունը շեշտադրելու համար: Կենտրոնանալով անձնական պատմությունների վրա՝ լրագրողները կարող են առավել խոր պատկերացում տալ նրանց առջև ծառացած խնդիրների և նրանց ցուցաբերած ուժի մասին:

Փոխհատական վերլուծությունը: Ճանաչեք գենդերի փոխհատումն այլ ինքնությունների հետ, ինչպիսիք են ռասան, էթնիկ պատկանելությունը, ազգությունը, կրոնը և սոցիալ-տնտեսական կարգավիճակը:

Ուսումնասիրեք, թե ինչպես են այս խաչվող գործոնները ձևավորում կին փախստականների փորձառությունները և ռեսուրսներին հասանելիությունը:

Մարտահրավերները և խոցելի կողմերը: Լուսաբանեք կին փախստականների առջև ծառացած եզակի մարտահրավերների և խոցելի կողմերի, այդ թվում՝ գենդերային բռնության, առողջապահության, կրթության և տնտեսական հնարավորությունների հասանելիության վերաբերյալ: Այդ հարցերը լուսաբանելը կարող է նպաստել նրանց իրավունքների պաշտպանությանն ու աջակցության տրամադրման ջանքերին:

Առաջնորդությունը և կարողությունները: Ներկայացրեք կին փախստականներին, որոնք իրենց համայնքներում առաջնորդներ են, կամ որոնք սատարում են փոփոխություններին: Նրանց տեսակետները և կարողություններն ամրապնդելն օգնում է պայքարել կարծրատիպերի դեմ և խթանում է նրանց կատարած ներդրումների առավել ճշգրիտ ըմբռնումը:

Մշակութային զգայունությունը: Լուսաբանմանը մոտեցեք մշակութային զգայունությամբ և խուսափեք կին փախստականների առնչությամբ կարծրատիպերն ամրապնդելուց կամ նրանց վերաբերյալ պատմությունները խարանելուց: Փորձեք ճշգրիտ կերպով ներկայացնել նրանց տարբեր ծագումները, փորձառությունները և ինքնությունները:

Ծառայությունների հասանելիությունը: Ուսումնասիրեք կին փախստականների համար անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը և իրավաբանական օգնությունը: Շեշտադրեք ինչպես ծառայությունների բացերը, այնպես էլ այդ բացերը վերացնելու համար կատարված հաջող միջամտությունները:

Ընտանիքի և համայնքի զարգացումները: Ուսումնասիրեք, թե ինչպես են ընտանիքի և համայնքի զարգացումներն ազդում կին փախստականների փորձառությունների և որոշումների կայացման գործընթացների վրա: Սա ներառում է այնպիսի հարցերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են ընտանիքի անջատումը, խնամքի պարտականությունները և սոցիալական աջակցության շրջանակները:

Քաղաքականության վերլուծությունը: Ներկայացրեք փախստականների պաշտպանության և աջակցության հետ կապված քաղաքականությունների ու գործելակերպերի, հատկապես գենդերային հատուկ հետևանքներ ունեցող քաղաքականությունների ու գործելակերպերի վերլուծությունը: Սա ներառում է ապաստանի քաղաքականությունները, փախստականների վերաբնակեցման ծրագրերը, ինչպես նաև մարդասիրական օգնության բաշխումը:

Համագործակցությունը տեղական կազմակերպությունների հետ: Համագործակցեք տեղական լրագրողների և համայնքային կազմակերպությունների հետ՝ ապահովելու համար, որ լուսաբանումը ճշգրտորեն արտացոլի կին փախստականների տեսակետներն ու առաջնահերթությունները: Պատմությունները ներկայացնելու գործընթացում նրանց տեսակետները շեշտադրելը շատ կարևոր է՝ իսկության և ճշգրտության համար:

Իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը ներկայացնող պատմությունները: Շեշտադրեք կին փախստականների իրավունքներն ու հնարավորություններն ընդլայնող նախաձեռնություններն ու կազմակերպությունները, ինչպիսիք են կրթական ծրագրերը, մասնագիտական ուսուցումը կամ համայնքային աջակցության շրջանակները: Այդ պատմությունները ցուցադրում են նրանց դիմացկունությունն ու կարողությունը՝ հակազդելով զոհացման պատմություններին:



Ինչպես հարցազրույց անցկացնել կանանց և աղջիկների հետ

Կին և աղջիկ փախստականների հետ հարցազրույցի ժամանակ անհրաժեշտ է կիրառել զգայուն և հարգալից մոտեցում՝ նրանց անվտանգությունը, արժանապատվությունը և բարեկեցությունն ապահովելու համար: Ստորև ներկայացված է մանրամասն ուղեցույց, որը կօգնի լրագրողներին այդ հարցազրույցներն անցկացնել էթիկայի կանոններին համապատասխան և արդյունավետ ձևով.

Նախապատրաստումը

Ուսումնասիրեք նախապատմությունը

- Հասկացեք փախստականի այն ճգնաժամի համատեքստը, որի մասը նա կազմում է, այդ թվում՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնները:
- Ծանոթացեք կին փախստականների առջև ծառացած հատուկ մարտահրավերներին, ինչպիսիք են գենդերային բռնությունը, խտրականությունը և ռեսուրսների հասանելիությունը:

Ստեղծեք վստահության մթնոլորտ

- Աշխատեք վստահելի միջնորդների հետ, ինչպիսիք են տեղական ՀԿ-ները կամ համայնքի ղեկավարները, որոնք կարող են նպաստել ծանոթությունների հաստատմանը և երաշխավորել նրանց մտադրությունների ազնվությունը:

Մշակութային զգայունությունը

- Հիշեք այն մշակութային նորմերի և գործելակերպերի մասին, որոնք կարող են ազդել հաղորդակցության ու հարմարավետության վրա:
- Հնարավորության դեպքում սովորեք փախստականի լեզվով գործածվող հիմնական արտահայտությունները, կամ կազմակերպեք կին թարգմանչի կողմից թարգմանություն:

Հարցազրույցի անցկացումը

Անվտանգ միջավայրի ստեղծումը

- Հարցազրույցի համար ընտրեք մասնավոր և անվտանգ վայր, որտեղ փախստականն իրեն ապահով և հարմարավետ է զգում:
- Ապահովեք գաղտնիություն՝ հավաստիացնելով, որ նրա ինքնությունը պաշտպանված կլինի, և նրա անձնական տվյալները չեն բացահայտվի առանց նրա համաձայնության:

Կապ հաստատելը

- Մինչև պաշտոնական հարցազրույցն սկսելը որոշ ժամանակ անցկացրեք՝ կապ հաստատելու համար: Վարեք անկաշկանդ զրույց, որպեսզի հարցազրույց տվողն իրեն հանգիստ զգա:
- Բացատրեք հարցազրույցի նպատակը, տեղեկություններն օգտագործելու եղանակները և ստացեք տեղեկացված համաձայնություն:

Կիրառեք տրավմաների մասին տեղեկացված մոտեցումներ

- Եղեք համբերատար և թույլ տվեք հարցազրույց տվողին վերահսկել հարցազրույցի տեմպը:
- Խուսափեք այնպիսի մանրամասներ հարցնելուց, որոնք հիշելը կարող է տրավմատիկ լինել: Եթե նրանք անհանգստանան, ապա առաջարկեք ընդմիջել կամ հարկ եղած դեպքում դադարեցնել հարցազրույցը:

Ստացեք տեղեկացված համաձայնություն

- Համոզվեք, որ անձը հասկանում է իր մասնակցության հետ կապված ցանկացած հնարավոր ռիսկ կամ օգուտ: Ռիսկերը կարող են լինել՝ հանրության կողմից բացահայտումը, բացասական արձագանքը կամ անձնական անհարմարությունը, իսկ օգուտները կարող են լինել իրազեկվածության մակարդակի բարձրացումը կամ հասարակական կարծիքի վրա ազդելը:
- Ապահովեք կամավոր մասնակցություն և ստացեք բացահայտ համաձայնություն՝ ցանկալի է գրավոր կամ ձայնագրության միջոցով:

Կատարեք հարցադրումներ

▶ Անձին տվեք Ձեր կամ Ձեր խմբագրի կոնտակտային տվյալները, եթե հարցազրույցից հետո նրանք ունենան լրացուցիչ հարցեր կամ մտահոգություններ:

▶ Հարցազրույցից հետո հետևողական եղեք՝ համոզվելու համար, որ նրանք չեն հրաժարվել իրենց համաձայնությունից, հատկապես, եթե լուրջ փոփոխություններ տեղի ունենան նրանց պատմության ուղղության կամ շրջանակի մեջ:

Բաց հարցեր

▶ Օգտագործեք բաց հարցեր, որոնք հնարավորություն են տալիս հարցազրույց տվողին սեփական բառերով պատմել իր պատմությունը: Օրինակ, տվեք այսպիսի հարցեր՝ «Կարո՞ղ եք ինձ պատմել այս վայր Ձեր ճամփորդության մասին» կամ «Ո՞րն է եղել Ձեր փորձառության ամենադժվար մասը»:

▶ Անհրաժեշտության դեպքում տվեք մեղմ հուշումներ, օրինակ՝ «Կարո՞ղ եք ինձ դրա մասին առավել մանրամասն պատմել»:

Ակտիվ լսելը

▶ Ակտիվ լսելու միջոցով ցուցաբերեք կարեկցանք և հասկացողություն: Գլխով հավանության նշան արեք, պահպանեք աչքի կոնտակտ, իսկ բանավոր հաստատումները կարող են օգնել հարցազրույց տվողին իրեն լսված և հարգված զգալ:

▶ Կրկնեք այն, ինչ լսել եք՝ համոզվելու համար, որ պատմությունը ճիշտ եք ընկալել և ցույց տվեք, որ գնահատում եք նրանց պատմությունը:

Սահմանները հարգելը

Ճնշում չգործադրելը

▶ Հարգեք հարցազրույց տվողի՝ որևէ անհարմար հարցի չպատասխանելու իրավունքը:

▶ Խուսափեք կրկին տրավմա հասցնող հարցերից, որոնք շեշտադրում են բռնության կամ տրավմայի պատկերավոր մանրամասները:

Մշակութային և անձնական սահմանները

▶ Հիշեք փախստականների միջև գենդերային փոխազդեցությունների և ֆիզիկական շփման հետ կապված մշակութային նորմերը:

▶ Թույլ տվեք հարցազրույց տվողին սահմաններ դնել այն հարցերի առնչությամբ, որոնք նա հարմար է գտնում քննարկել:

Հարցազրույցից հետո

Տրամադրեք օժանդակ տեղեկություններ

▶ Տեղեկություններ տրամադրեք տեղի՝ օժանդակություն տրամադրող ծառայությունների մասին, ինչպիսիք են խորհրդատվություն, իրավաբանական օգնություն տրամադրող կամ համայնքային կազմակերպությունները, որոնք կարող են աջակցել նրանց:

▶ Համոզվեք, որ նրանք գիտեն, թե ինչպես կապ հաստատել դրանց հետ, եթե հարցազրույցից հետո ունենան որևէ մտահոգություն կամ հետագա օգնության կարիք:

Հետագա գործողությունները

▶ Եթե անհրաժեշտ և համաձայնեցված է, ապա կապ հաստատեք հարցազրույց տվողի հետ, որպեսզի նրան տրամադրեք թարմ տեղեկություններ այն մասին, թե ինչպես է օգտագործվելու նրա պատմությունը և ստուգելու նրա բարեկեցությունը:

▶ Համոզվեք, որ նա իրեն վատ չի զգում ցանկացած հետագա հարցազրույցից կամ լրացուցիչ տեղեկություն տրամադրելու խնդրանքից:

Էթիկական նկատառումները

Անանունություն և գաղտնիություն

▶ Օգտագործեք կեղծանուններ և խուսափեք նույնականացնող տեղեկություններ օգտագործելուց, եթե հարցազրույց տվողը հստակ թույլտվություն չի տվել:

▶ Թափանցիկ եղեք այն հարցի առնչությամբ, թե ինչպես է նրանց պատմությունը հրապարակվելու և ով է լինելու պոտենցիալ լսարանը:

Հավասարակշռված ներկայացում

▶ Փորձեք հարցազրույց տվողի պատմությունը ներկայացնել արժանապատվորեն՝ շեշտադրելով նրա դիմացկունությունը և ուժը, ինչպես նաև նրա առջև ծառացած մարտահրավերները:

▶ Տրամադրեք փախստականների վրա ազդող առավել լայն հարցերի համար համատեքստ՝ նրանց իրավիճակի համապարփակ պատկերացում տալու համար:

Գենդերային ապատեղեկատվությունը

Գենդերային ապատեղեկատվությունն ապատեղեկատվության և գենդերային կարծրատիպերի թունավոր արդյունքն է:

Ապատեղեկատվությունը կեղծ կամ ապակողմնորոշող բովանդակություն է, որը տարածվում է միտումնավոր մոլորեցնելու մտադրությամբ կամ տնտեսական, սոցիալական ու քաղաքական օգուտ ստանալով նպատակով, և որը կարող է վնաս հասցնել հանրությանը: Այն տարբերվում է խնդրահարույց լրագրությունից, որի դեպքում տարածվում են մշտական (և չշտկված) սխալներ, և որոնք առաջանում են փաստերի վատ ուսումնասիրությունից կամ դրանց անփույթ ստուգումից, սենսացիա դարձնելուց, որի դեպքում փաստերը չափազանցվում են տպավորության համար, ինչպես նաև փաստերի՝ քաղաքական կուսակցության օգտին ընտրելուց՝ արդարության սկզբունքի հաշվին:

Ապատեղեկատվությունը հին տեխնիկա է: Համացանցը, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի հարթակները, այդուհանդերձ, պարարտ հող են ստեղծում դրա՝ տպավորիչ մասշտաբով և արագությամբ տարածման համար. ալգորիթմները խթանում ու տարածում են հրահրող բովանդակությունը և խոր արմատացած գենդերային կարծրատիպերը՝ կանանց և այլ գենդերի անձանց մեկուսացնելու համար:

- Բլոգերները, «Instagram» սոցիալական ցանցի «ինֆլուենսերները», ինչպես նաև «YouTube» սոցիալական ցանցի աստղերն իրականացնում են արտադրատեսակների և քաղաքական գործիչների գովազդ՝ առանց բացահայտելու, որ իրենք դրա համար վճարվում են.
- գաղտնի վճարումներ, որոնք տրվում են այն մեկնաբաններին (հաճախ կեղծ ինքնությամբ մեկնաբաններին), որոնք ձգտում են հաստատել, վարկաբեկել կամ ահաբեկել առցանց ֆորումներում.
- թվային եղանակով տարածվող՝ բևեռացման համատեքստում ապատեղեկատվությունը կարող է լրագրությունը նսեմացմելու վտանգ պարունակել:

Ապատեղեկատվության հիմնական ռիսկերը երկուսն են: Նախևառաջ, հասարակությունը կարող է դադարել ամբողջ բովանդակությանը հավատալը, այդ թվում՝ լրագրությանը: Այս համատեքստում նրանք, փոխարենը, կարող են հավատալ իրենց սոցիալական ցանցերի կողմից առաջարկվող այն բովանդակությանը, որն իրենց դուր է գալիս և չվերլուծել այն: Երկրորդ՝ առկա է ռիսկ, որ կառավարությունները կարող են փորձել սահմանել լրատվամիջոցների անհիմն կարգավորումներ:

Աշխարհի շատ մասերում վստահությունը լրատվամիջոցների ու լրագրության նկատմամբ փխրուն և թուլացած էր սոցիալական մեդիայի ի հայտ գալուց շատ ավելի առաջ: Այնուամենայնիվ, որպես նորություն հրամցվող և սոցիալական ցանցերի միջոցով տարածվող ապատեղեկատվության և սխալ տեղեկատվության ահռելի ծավալն ու տարածումը դարձել է վարակիչ հիվանդություն, որը սպառնում է էլ ավելի վնաս հասցնել լրագրության հեղինակությանը:

Սոցիալական մեդիայի հարթակներում և համացանցում բոլորի համար անվճար գերարագ տեղեկատվության մեջ բոլորը կարող են լինել հրապարակող: Արդյունքում քաղաքացիները պայքարում են, որպեսզի տարբերեն, թե որ տեղեկությունն է ճիշտ, իսկ որը կեղծ՝ հանգեցնելով ցինիզմի և անվստահության: Ծայրահեղական հայացքները, դավադրության տեսություններն ու պոպուլիզմը ծաղկում են, և երբեմնի ընդունված ճշմարտություններն ու ինստիտուտները հարցականի տակ են դրվում: Այս աշխարհում խմբագրությունները պայքարում են հավակնելու և կատարելու որպես դռնապահներ իրենց պատմական դերակատարությունը, որոնց տված արդյունքը կարող է օգնել հաստատել ճշմարտությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք և աղջիկներն անհամաչափորեն դառնում են առցանց բռնության, զրպարտչական արշավների, վիրավորանքների և ոտնձգությունների թիրախ:

Գենդերային ապատեղեկատվությունը բաղկացած է կեղծ տեղեկություններից կամ իրական տեղեկությունների շահարկումից, որի նպատակն է ապակողմնորոշել, շփոթեցնել, վարկաբեկել և նսեմացնել: Այն գործիք է դարձնում գենդերային կարծրատիպերը և օգտագործում է կնատյաց պատմույթներ՝ կասկածի տակ դնելով կանանց կարողությունները, հավատարմությունը կամ բարոյականությունը: Այն հիմնականում թիրախավորում է կոնկրետ, հայտնի կանանց, ինչպիսիք են քաղաքական գործիչները, լրագրողները և ակտիվիստները՝ փորձելով վարկաբեկել, ահաբեկել կամ լռեցնել նրանց (Ռայստրիք և Էլլենա, 2024թ.):

Գենդերային ապատեղեկատվության նպատակն է լսարանին միտումնավոր մոլորեցնել և ապակողմնորոշել՝ կամ վնաս պատճառելու, կամ քաղաքական, անձնական կամ ֆինանսական օգուտ ստանալու նպատակով: Գենդերային ապատեղեկատվություն տարածելու չարամիտ մտադրությունը հաճախ կազմում է իշխանությունն ամրապնդելու համապարփակ քաղաքական ռազմավարության մաս:

Գենդերային ապատեղեկատվությունը կարող է ունենալ տարբեր ձևեր, այդ թվում՝

- սեռական բնույթի կեղծ տեղեկությունների, պատկերների/տեսանյութերի հրապարակումը, որոնք խախտում են կանանց կամ տղամարդկանց սոցիալապես ընդունելի համարվող վարքագիծը.
- ֆոտոշոփ արված պատկերների, տեսանյութերի, մեմերի հրապարակումը՝ վարկաբեկելու և ծաղրելու նպատակով.
- ավանդական «ընտանեկան արժեքները» պաշտպանելու պատրվակով կեղծ հայտարարությունների տարածումը՝ զուգակցելով կրոնի, ռասայի կամ ներգաղթի մասին պատմությունները.
- նրանց հոգեկան առողջության, կարողությունների, բարեխղճության և բարոյականության մասին պնդումների տարածումը:

Կազմակերպված զրպարտչական արշավները թիրախավորված անձանց վրա սառեցնող ազդեցություն ունեն և կարող են ստեղծել դոմինոյի էֆեկտ, որի արդյունքում այլ կանայք կարող են չցանկանալ դառնալ քաղաքականապես ավելի ակտիվ և արտահայտել իրենց կարծիքները: Որպես այդպիսին, այն արդյունավետորեն խաթարում է ժողովրդավարությունը և մասնակցությունը հասարակական կյանքին (Դի Մեկո, 2023թ.):

ԽՈՐՀՈՒՐԴ. հարձակումները կարող են կապված լինել կոնկրետ իրադարձությունների (օրինակ՝ ընտրությունների, ակտիվիստների կողմից կազմակերպված արշավի, հետաքննության) կամ ավելի ընդհանուր դեպքերի (օրինակ՝ քաղաքական ընդդիմության, վերարտադրողական իրավունքների վերաբերյալ քննարկումների) հետ: Սոցիալական ցանցերում կատարվող հրապարակումները, հարցազրույցները, տեսանյութերը, մեմերը կանանց նկարագրում են հետևյալ կերպ.

Անընդհատ կրնկելու դեպքում այս եզրույթները կաթիլներ են, որոնք վճռորոշ պահերի, հատկապես ընտրությունների կամ օրենսդրական կարևոր որոշումների ընդունման, այդ թվում՝ կանանց իրավունքների վերաբերյալ չափազանց կարևոր կոնվենցիայի վավերացման ժամանակ վերածվում են օվկիանոսի՝ լսարանի աչքերում անձանց նսեմացնելու համար:

Հայաստանը հատկապես խոցելի է Ռուսաստանի և պահպանողական ուժերի կողմից աջակցվող քարոզչության նկատմամբ: «Գենդեր» եզրույթի իմաստը խեղաթյուրվել է ծայրահեղ ազգայնական խմբերի կողմից և օգտագործվել է մարդկանց այն գաղափարի շուրջ շահագործվելու համար, որ հավասարության համար պայքարողները քանդում են հայ հասարակության կառուցվածքը: Ճնշման ներքո իշխանությունները հանեցին այդ եզրույթն իրավական փաստաթղթերից՝ մասամբ տեղի տալով այսպես կոչված «գենդերային գաղափարախոսության» դեմ ուղղված պատմություններին: Այս հանգամանքը թույլ չտվեց օրենսդրորեն պաշտպանել կանանց ու խոցելի խմբերի իրավունքները և պատշաճ կերպով իրականացնել միջազգային պայմանագրերը: (Ջիլոզյան, 2017թ.)

Կանանց և ԼԳԲՏԻՔ+ քաղաքական գործիչների վրա հարձակումներն ավելի հաճախ են տեղի ունենում և ավելի կազմակերպված են, քան իրենց տղամարդ գործընկերների դեմ հարձակումները. նրանք հաճախ թիրախավորվում են ոչ թե իրենց քաղաքական դիրքորոշումների ու ծրագրերի, այլ կին լինելու պատճառով. արշավների հիմքում ընկած է նրանց անձնական կյանքը կամ արտաքին տեսքը: Դրանք նաև փոխհատական են (խտրականության տարբեր հիմքերով, ինչպիսիք են տարիքը, գենդերը, ռասան, հաշմանդամությունը և այլն):

Ստորև ներկայացված են գենդերային ապատեղեկատվության արշավների օրինակներ՝

Հայաստանի Հանրապետություն

Լրագրող և բնապահպան ակտիվիստ Թեհմինե Ենոքյանը դարձել է զրպարտչական հարձակումների, հետապնդումների և վարույթի, մասնավորապես՝ Ռազմավարական հայցադիմումները հանրային մասնակցության դեմ (SLAPP հայցադիմումներ) դատավարության օբյեկտ՝ հանքարդյունաբերության գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ունեցած վնասները լուսաբանելու իր գործունեության պատճառով (Եվրոպայի խորհուրդ, 2023թ.): Նույն կերպ, զրպարտչական արշավների թիրախում էր հայտնվել կանանց իրավունքների ակտիվիստ և Հայաստանում Կանանց ռեսուրսային կենտրոնի համահիմնադիր Լարա Ահարոնյանը, որոնց նպատակն էր վարկաբեկել նրան և արատավորել նրա հեղինակությունը: Այդ արշավների հիմքում ընկած էին «հակահայկական» արժեքներ քարոզելու և օտար ուժերի գործակալ լինելու կեղծ մեղադրանքները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպան և նախկին նախարար Զարուհի Բաթոյանը հարձակման ենթարկվեց այն բանից հետո, երբ բացահայտ կերպով խոսեց հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց առջև ծառացած սեռականության մարտահրավերների մասին:

Ռումինիա

Քաղաքական վերնախավի կողմից կատարվող գրագողության դեպքերի բացահայտման մեջ մասնագիտացած ռումինացի հետաքննող լրագրող Էմիլիա Շերկանը դարձել էր զրպարտչական արշավի թիրախ, որի ինտիմ լուսանկարները տարածվել էին տարբեր կայքերում, ինչպես նաև դարձել էր էլ. փոստով ստացվող սպառնալիքների և սոցիալական ցանցերում հաղորդագրությունների թիրախ:

Մոլդովայի Հանրապետություն

2020 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ թեկնածու Մայա Սանդուն պահպանողական ուժերի կողմից ենթարկվեց առցանց քննադատության՝ ամուսնացած չլինելու և երեխաներ չունենալու համար: Նրա քննադատները չէին կենտրոնանում իր քաղաքական ծրագրի վրա, այլ պնդում էին, թե նա չի կարող ներկայացնել Մոլդովայի հասարակությունը, որտեղ ընտանիքն առանցքային նշանակություն ունի: Սանդուն հաղթեց նախագահական ընտրություններում:

Իտալիա

Պառլամենտի նախկին խոսնակ Լաուրա Բոլդրինիին տրամադրվեց մշտական ոստիկանական ուղեկցություն այն բանից հետո, երբ նրան փոստով ուղարկվեցին փամփուշտներ, սոցիալական մեդիայի միջոցով իր միգրացիոն և գենդերային հավասարության դիրքորոշման, ինչպես նաև քաղաքական ընդդիմախոսների հարձակումներն անարգելու համար ստացավ խմբակային բռնաբարության սպառնալիքներ:

Ինչպես արձագանքել

Գենդերային ապատեղեկատվության հանդիպելիս լրագրողները չեն կարող պարզապես ապավինել սխալների «ռետրոակտիվ ուղղումներին»: Դրա դեմ պայքարի հատուկ միջոցները հետևյալն են՝

- սկսել կիրառել գենդերազգայուն լուսաբանման տեխնիկաներ.
- լինել թափանցիկ՝ ցույց տալով տեղեկատվության աղբյուրները, լինելով հաշվետու և չխուսափելով քննադատությունից.
- լուսաբանել պատմությունը՝ ապատեղեկատվության նոր դեպքեր և ձևեր հայտնաբերելու ու բացահայտելու միջոցով.
- գենդերային ապատեղեկատվության լուսաբանումը դարձնել «առաջնահերթություն»: Հետաքննել և քննադատական ձևով լուսաբանել հատուկ արշավները՝ հարցազրույցներ անցկացնելով (խնդրի մասին բարձրաձայնել ցանկացող) զոհերի, ապատեղեկատվության և գենդերային հարցերով փորձագետների հետ՝ վերլուծություններ և համատեքստ տրամադրելու համար.
- բարձրացնել լսարանի լրատվական գրագիտության մակարդակը: Սոցիալական մեդիայի դարաշրջանում լրագրողները կարող են դերակատարություն ունենալ տեղեկությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքի խրախուսման և հեղինակավոր ու վստահելի բովանդակության մանրամասն ընտրության հարցում՝ օգնելով օգտատերերին գտնել որակյալ բովանդակություն՝ անկախ աղբյուրից:

Մեդիա կազմակերպություններում գենդերային հայեցակետի առաջխաղացումը

Լրագրողները չեն գործում մեկուսի, նրանք հանդիսանում են այն կազմակերպությունների մասը, որոնք նույնպես պատասխանատու են գենդերազգայուն մոտեցումներ և էթիկական լուսաբանումն իրենց պրակտիկայում ինտեգրելու համար ինչպես իրենց խմբագրական որոշումների, այնպես էլ գբաղվածության քաղաքականության տեսանկյունից:

Չափազանց կարևոր է լրատվամիջոցներում գենդերազգայուն և տարիքազգայուն բաղադրիչի ուղղորդումը, ինչպես նաև դրա հաշվառմամբ լուսաբանման առնչությամբ վերապատրաստումների և կարողությունների զարգացումը: Ցանկալի է, որ նմանատիպ վերապատրաստումներն անցկացվեն յուրաքանչյուր տարի, որպեսզի լրագրողները, գլխավոր խմբագիրները և խմբագիրները գենդերային հարցերի դեպքում հասկանան իրենց ոլորտի ազդեցությունը:

Այդ վերապատրաստումները չպետք է սահմանափակվեն «իրազեկման մակարդակի բարձրացման» մոտեցումներով և պետք է առաջարկեն գենդերազգայուն լուսաբանման գործելակերպի առջև ծառացած խոչընդոտները հաղթահարելու ուղիներ: Դրա շրջանակներում պետք է ուսումնասիրվեն գենդերազգայուն լուսաբանման վերաբերյալ հիմնական ուղեցույցների ու չափանիշների ընդունումը և դրանց կատարումը խթանելու ռազմավարությունները՝ ապահովելով կազմակերպությունում այդ գործընթացի աջակցությունը: Այս վերապատրաստումների շրջանակներում պետք է ներկայացվեն գենդերազգայուն լուսաբանման օրինակներ, որոնք մասնագետների համար հստակ կնախանշեն այն օրինակելի գործելակերպը, որին պետք է նրանք ձգտեն հասնել:

Հետևյալ հարցերը կօգնեն մեդիա կազմակերպություններին վերհանել իրենց կարիքները.

- Արդյոք Ձեր մեդիա կազմակերպությունը գենդերազգայուն լուսաբանման, այդ թվում՝ սեռական և գենդերի հիմքով բռնության, հակամարտություններից տուժած համայնքների և գենդերային ապատեղեկատվության լուսաբանման համար ունի՞ խմբագրական քաղաքականություն կամ ուղեցույց:
- Արդյոք ներքին խմբագրական ուղեցույցներն ունե՞ն բարացանկ՝ այդ թեմաները լուսաբանելու համար:
- Արդյոք Ձեր կազմակերպությունը, որպես իր գբաղվածության քաղաքականության մաս, ունի՞ բազմազանության քաղաքականություն:
- Արդյոք Ձեր մեդիա կազմակերպությունն աշխատանքի ընդունո՞ւմ է տարբեր ծագումով (օրինակ՝ ռասայական, սեռային, կրոնական պատկանելություն ունեցող և էթնիկ փոքրամասնություն կազմող) լրագրողների:
- Արդյոք Ձեր կազմակերպությունը կազմակերպո՞ւմ է հատուկ էթիկական սկզբունքների պահպանմամբ լուսաբանման, տվյալների լրագրության, անվտանգության և օրենսդրության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Հավելված 1. ամփոփ ստուգաթերթ լրագրողների համար

Բովանդակությունը և լեզուն

- Արդյոք լուրերը զե՞րծ են գենդերային կարծրատիպերից:
- Արդյոք լուրերում ընդգրկվո՞ւմ են հարցազրույցներին մասնակցող հավասար թվով տղամարդիկ և կանայք:
- Արդյոք լուրերում ընդգրկվո՞ւմ են կանայք որպես փորձագետներ:
- Արդյոք լուրերով անուղղակի կամ բացահայտ ձևով շեշտադրվում է գենդերային հավասարությունը կամ անհավասարությունը:
- Արդյոք լուրերում կարծրատիպային, խտրական, կանխակալ և սեքսիստական լեզու չի՞ գործածվում: Արդյոք լուրերում փորձ կատարվո՞ւմ է խուսափել այնպիսի սեքսիստական եզրույթներից, ինչպիսիք են «կին պատգամավոր» կամ «պատգամավորուհիներ», «կին վարորդ, «կին մարզիկ» եզրույթները:
- Արդյոք լուրերը պարունակում են քննադատական շեշտադրումներ կանանց վերաբերյալ հարցերում (օրինակ՝ «անսպասելի հաջողություն»):

Պատկերներ և նկարներ

- Արդյոք տեսողական պատկերներն ազդո՞ւմ են լուրերի բովանդակության վրա: Թե՞ դրանք պարզապես տեղադրված են աչք շոյելու համար:
- Արդյոք պատկերներում գերակշռո՞ւմ է սեռերից մեկը:
- Արդյոք փորձ կատարվո՞ւմ է խուսափել գենդերային կարծրատիպերն ամրապնդող պատկերներից:
- Արդյոք փորձ կատարվե՞լ է խուսափել բռնություն պարունակող պատկերների օգտագործումից:
- Արդյոք փորձ կատարվե՞լ է խուսափել «ցածր անկյան տակ» նկարահանումից:

Լուսաբանման ժամանակ ապահովել բազմազան աղբյուրներ

- Ի՞նչ տոկոս է կազմում պետական և կազմակերպության պաշտոնատար անձանց մասնակցությունը հաղորդումներում:
- Ի՞նչ տոկոս են կազմում առաջադեմ, հանրային շահերը պաշտպանող խմբերը:
- Ի՞նչ տոկոս է կազմում կանանց մասնակցությունը:
- Ի՞նչ տոկոս է կազմում փոքրամասնությունների խմբերի մասնակցությունը:

Ո՞ւմ տեսանկյունից են լուրերը հաղորդվում

- Ո՞ւմ շահն է լուսաբանմամբ սպասարկվում:
- Արդյոք այդ շահը համընկնո՞ւմ է կառավարության շահի հետ:
- Արդյոք դա համընկնո՞ւմ է բիզնեսի շահի հետ:
- Արդյոք լուսաբանումը բխո՞ւմ է հանրության շահերից: Ո՞ր հանրության:

Տրամադրեք համատեքստ

- Արդյոք պատմությունը ներկայացվա՞ծ է այն համատեքստում, որը թույլ կտա հանրությանը ձևավորել իր սեփական կարծիքը:
- Արդյոք համատեքստը ներկայացվա՞ծ է մանրամասն և հավասարակշռված ձևով:

Հավելված 2. տրավմաների մասին տեղեկացված լրագրությունը

Տրավմաների մասին տեղեկացված լրագրությունը մահվան մահճում գտնվող անձի փորձի մասին լուսաբանումն է այնպես, որը հաշվի է առնում զոհերի հոգեբանական և էմոցիոնալ կարիքները:

Պատերազմի ժամանակ, սպանությունից հետո, բնական աղետից կամ սեռական բռնությունից հետո առաջանում է պատմություն, որը պետք է պատմել: Լրագրողների կողմից այդ պատմությունը լուսաբանելու եղանակն ազդում է բռնություն վերապրածների վրա, որոնք հաճախ չունեն անձնական կյանքի անձեռնմխելիություն և խոցելի են երկրորդային զոհացման համար: Լրագրողները կարող են ոչ դիտավորությամբ կամ դաժանաբար լրացուցիչ վնաս պատճառել բռնության զոհերին կամ կարող են իրենք հայտնվել ընկճված վիճակում:

Ինչու է դա կարևոր

Տրավմաների մասին տեղեկացված լրագրությունը տալիս է տեղեկություններ այն խոր ազդեցության մասին, որ տրավմատիկ իրադարձությունները կարող են թողնել անձանց ու համայնքների վրա և օգնում է ապահովել, որպեսզի լուսաբանման գործընթացը լրացուցիչ վնաս չհասցնի արդեն իսկ տրավմաներ ստացած անձանց: Այն բարելավում է նաև լրագրության որակը՝ խթանելով վստահությունը և ստեղծելով առավել մանրամասն, կարեկցող պատմություններ, որոնք առավել լավ են արտացոլում մարդկային փորձի բարդությունները:

Մինչ հարցազրույցը

Մանրամասն ուսումնասիրեք, թե ովքեր են բռնության զոհերը կամ այն վերապրածները, և ինչի միջով են նրանք անցել: Հասկացեք, թե ինչպես է տրավման աշխատում: Հոգեբույժները խոսում են տրավմայի երեք փուլերի մասին՝ տրավմա ստանալու սկզբնական փուլ, երբ այն նոր է և թարմ, վերականգնման փուլ, երբ զոհը հաշտվում է կատարվածի հետ և ընդունման փուլ, երբ զոհը կարող է ստանալ կամ չստանալ բուժում:

Մանրամասն պլանավորեք հարցազրույցները: Հստակեցրեք, թե դրանցից կոնկրետ ինչ եք ակնկալում: Ինչպե՞ս է այս անձի փորձը պոտենցիալ կերպ տեղավորվում այն ավելի լայն պատմության մեջ, որը դուք ուսումնասիրում եք:

Մշակեք հարցերը և այն ուղին, որով ցանկանում եք, որ ընթանա զրույցը: Չափազանց կարևոր է, որ բռնություն վերապրածներն իրենց ապահով զգան, այդ թվում՝ հնարավություն ունենան ընտրել հարցազրույցի վայրը և այն անձանց, որոնք կարող են ներկա գտնվել հարցազրույցին: Նույնիսկ այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են հարցազրույցին ժամանակին ներկայանալը, կարևոր են վստահության զգացում հաղորդելու համար:

Հաշվի առեք տեղական նորմերը: Որոշ մշակույթներում զոհերին դիպչելը կամ աչքի կոնտակ հաստատելը կարող է վիրավորանք համարվել, մինչդեռ որոշ մարդիկ կարող են չցանկանալ լսել կամ գործածել «բռնաբարություն» բառը: Տղամարդ լրագրողները պետք է զգույշ լինեն սեռական բռնության ենթարկված կնոջ հետ առանձին հարցազրույց վերցնելիս:

Հարցազրույցի ժամանակ

Հարցրեք հարցազրույց տվողին, թե ինչպես է ցանկանում նույնացվել՝ որպես բռնություն վերապրած, թե՝ զոհ, կամ նույնիսկ ինչպես է ցանկանում, որ իր անունը նշվի:

Խուսափեք «Ինչպե՞ս եք զգում» հարցից: Դա ամենաշատ օգտագործվող և ամենաքիչ արդյունավետ հարցն է. հարց, որը բռնություն վերապրածների համար միշտ ամենատաղտկալին է: Ավելի լավ է հարցրեք. «Ինչպե՞ս եք հիմա» կամ «Ինչպե՞ս դա հաղթահարեցիք» կամ «Ի՞նչ եք կարծում...»:

Ստուգեք՝ արդյոք կարո՞ղ եք բարդ հարց տալ, հետո լսեք, շատ մի խոսեք:

Կիրառեք ակտիվ լսելու հմտություններ՝ պահպանելով անհրաժեշտ աչքի կոնտակտ և կիրառելով հետաքրքրվածության ու ներգրավվածության մասին վկայող ոչ խոսքային ազդանշաններ: Հաղորդակցության մեծ մասն ավելի շուտ տեղի է ունենում մարմնի լեզվի և ձայնի տոնի միջոցով, քան բառերով:

Ամենալավն աշխատում են պարզ և բաց հարցերը: Փորձեք խուսափել այն հարցերից, որոնց կարելի է պատասխանել պարզապես «այո» կամ «ոչ»: Միաժամանակ մեկից ավելի հարց մի տվեք:

«Չափից շատ կարեկցանք» մի ցուցաբերեք: Դուք լրագրող եք, ոչ թե փրկիչ. ցուցաբերեք կարեկցանք և հասկացողություն՝ հստակ պահպանելով մասնագիտական սահմանները:

Առկա է տրավմայի վերակտիվացման հավանակություն: Դուք կարող եք սկսել հեշտ պատասխանվող, փաստերի վրա հիմնված հարցերից, օրինակ՝ քանի՞ տարեկան եք, սակայն հետո կարող եք նրբանկատորեն ընդունել դժվարությունը և ասել, որ եթե հարցերը շատ դժվար լինեն, ապա նրանք կարող են պարզապես բարձրաձայնել դրա մասին:

Եթե բռնություն վերապրածները չեն ցանկանում բացահայտել իրենց ինքնությունը, և դուք նկարահանում եք, ապա օգտագործեք հատուկ տեխնիկաներ, օրինակ՝ մեջքով դեպի ուժեղ լույսը կամ ստվեր առաջացնելու տեխնիկաները: Զգույշ եղեք դեմքի կամ կողքի ուրվագծերի կամ թվային եղանակով լղոզման կամ խճանկարային տեխնիկայի հետ, քանի որ ներկայումս պատկերները հաճախ և բավականին հեշտությամբ կարող են մեծացվել համակարգիչներում:

Հարցազրույցից հետո

Գրեք կամ խմբագրեք տեսանյութը շատ ուշադիր կերպ և ստուգելով: Պարզապես անունը կամ միայն կեղծանուն օգտագործելը բավարար չէ ինչ-որ մեկի ինքնությունը քողարկելու համար. դիտարկեք այնպիսի բնութագրիչներ թաքցնելու հնարավորությունը, ինչպիսիք են աշխատանքը, տարիքը կամ գյուղը և ուշադիր եղեք, որ սխալմամբ նույնացուցիչները ռեպորտաժում չթողնեք:

Պատմությունը կառուցեք զոհակենտրոն մոտեցմամբ՝ հիմնված զոհի կամ բռնություն վերապրածի տեսակետի վրա. նախքան ուղիղ եթեր դուրս գալը՝ պատմեք նրանց իրենց վերաբերյալ նյութի պատրաստման, խմբագրման և փաստերի ստուգման գործընթացի մասին:

Զգուշությամբ ընտրեք այն արտահայտությունները ու բառերը, որոնք գործածում եք: Արդյոք ձեր լեզուն ընկալելի՞ է հանրության համար: Խուսափեք այնպիսի մակերեսային արտահայտությունների գործածումից, ինչպիսիք են «Ցնցված համայնքը սգում է մահը...» կամ «Գյուղացիները դեռ փորձում են հաշտվել ողբերգության հետ...»: Դրանք մակերեսային են և ակնհայտ. փոխարենը՝ պարզապես նկարագրեք, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես են մարդիկ արձագանքում:

Հիշեք ինքնախնամքի մասին

Կարևոր է, որ այն լրագրողները, որոնք լուսաբանում են տրավմատիկ իրադարձություններ, հետևեն իրենց հոգեկան առողջությանը: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (ՀՏՍԽ) ցուցանիշը բարձր է պարբերաբար տրավմատիկ իրադարձություններ լուսաբանող լրագրողների շրջանում:

Հոգեբանները լրագրողներին առաջարկում են չտարվել այն ծանր պատմություններով, որոնց վրա նրանք աշխատում են. ինքնախնամքի պլան ունենալը նույնքան կարևոր է, որքան փաստերի ստուգումը: Լրագրողները, որոնք հոգ չեն տանում իրենց մասին, ի վիճակի չեն լիովին համագործակցել բռնություն վերապրածների հետ, որոնց պատմությունները նրանք փորձում են պատմել:

Հավելված 3. ռեսուրսներ՝ Հայաստանում կին և աղջիկ փախստականների համար

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայությունը պետական մարմին է, որը միգրացիայի ոլորտում մատուցում է բոլոր տեսակի ծառայություններ, այդ թվում՝ փախստականի կարգավիճակ ունեցող և միջազգային պաշտպանության ներքո գտնվող անձանց համար:

Պետական գերատեսչությունները, միջազգային կազմակերպությունները և հասարակական կազմակերպություններն իրենց իրավասությունների շրջանակներում աջակցություն են տրամադրում փախստականներին, այդ թվում՝ կացարանով ապահովման հարցում, ֆինանսական աջակցություն, իրավաբանական օգնություն, հոգեբանական աջակցություն, սոցիալական աջակցություն, բուժօգնություն, կրթության հասանելիություն և հայերենի դասընթացներ: Որոշումների և ընթացակարգերի մասին կարելի է կարդալ կառույցի կայքում հետևյալ հղմամբ՝ https://migration.am/newly_recognized_refugees:

2023 թվականի հոկտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղից հայ փախստականների արտագաղթից հետո, Կառավարությունը գործարկեց առաջնային կարիքի հաշվառման հարթակ, https://e-soc.am/, բռնի տեղահանված բնակչության առաջնային կարիքները գնահատելու համար: Հատկանշական է, որ առաջնային անհրաժեշտության ապրանքների ցանկում ընդգրկված են կանանց և աղջիկների համար նախատեսված առաջին անհրաժեշտության պարագաները: Սոցիալական աշխատողների համար մշակվեց ուղեցույց, որի նպատակն էր դյուրացնել շահառուների հետ ճշգրիտ ու արդյունավետ հաղորդակցությունը՝ հնարավորություն տալով վերհանել նրանց կարիքները, խնդիրները և հնարավոր ռիսկերը՝ արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակներում: Բացի այդ, մշակվեց տեղեկատվական ուղեցույց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար, որը պարունակում է համապարփակ տեղեկություններ՝ սոցիալական աջակցության ծառայություններ առաջարկող կենտրոնների և կազմակերպությունների մասին:

Սոցիալական և հոգեբանական աջակցություն հիմնականում տրամադրում են հասարակական կազմակերպությունները: Մասնավորապես, կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքարի համար ամբողջ երկրում գործում են պետության կողմից լիազորված «ընտանեկան բռնության դեմ պայքարի» 10 աջակցման կենտրոններ: Սերտորեն համագործակցելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ այդ կենտրոնները տրամադրում են հոգեբանական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն և սոցիալ-տնտեսական աջակցություն ընտանեկան բռնության զոհերին և այն վերապրածներին, այդ թվում՝ կին և աղջիկ փախստականներին:

Պետությունը չունի փախստական ճանաչված անձանց՝ կացարանով ապահովելու պարտավորություն: Այնուամենայնիվ, Միգրացիոն ծառայությունն իր տրամադրության տակ ունի հանրակացարաններ և կարող է ազատ տեղ լինելու դեպքում դրանցից մեկում սենյակ տրամադրել: Համապատասխան դիմումն անհրաժեշտ է ներկայացնել Միգրացիոն ծառայություն հետևյալ հասցեով՝ https://migration.am/?lang=en:

Ապաստան հայցողներին և փախստականներին անվճար տրամադրվում է իրավաբանական օգնություն՝ համաձայն «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Հանրային պաշտպանի գրասենյակն օրենքով սահմանված սոցիալապես անապահով խավերին տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն: Ապաստան հայցողները և փախստականները ներառված են որպես առանձին խմբեր, որոնք իրավունք ունեն ստանալու անվճար իրավաբանական օգնություն: Կայքում, որը հասանելի է նաև անգլերենով, տեղադրված են գրասենյակի աշխատանքային ժամերը և համապատասխան հեռախոսահամարները, որոնք կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝ https://hpg.am/en_us:

Իրավաբանական խորհրդատվություն տրամադրում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը՝ https://www.ombuds.am/en_us և Փաստաբանների պալատը՝ https://www.advocates.am/en/about-us/: Երկու կայքերի մասին տեղեկությունները հասանելի են նաև անգլերենով:

Զբաղվածության պետական գործակալությունը տրամադրում է ինչպես մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն և մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ, այնպես էլ անվճար աջակցություն՝ աշխատանք գտնելու և մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկվելու հարցում: Աշխատանքի տեղավորման հարցում աջակցություն տրամադրող ոչ պետական կազմակերպությունների ցանկը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://employment.am/en/index.html:

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը (ՄԿԱ ՓԳՀ) վարում է փախստականներին աջակցություն տրամադրող գործակալությունների և ՀԿ-ների թարմացված ցանկ: Այն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://help.unhcr.org/armenia/partners-and-contact-info/:

Հղումներ

Բալաբանովա Ի. և Կոջոյան (2020թ.), «Ուղեցույց գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հայաստանի լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների համար», Եվրոպայի խորհուրդ, Երևան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/media-guideline-eng-final/1680a15260, մուտքը՝ 2024 թվականի հունիսի 23-ին:

Բրեյն Մ. (2007թ.), «Տրավմա և լրագրություն. ուղեցույց լրագրողների, խմբագիրների և մենեջերների համար», Լրագրության և տրավմաների Դարթ կենտրոն, Նյու Յորք: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://dartcenter.org/sites/default/files/DCE_JournoTraumaHandbook.pdf, մուտքը՝ 2024 թվականի օգոստոսի 8-ին:

Եվրոպայի խորհուրդ (2011թ.), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա, Ստամբուլ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/168008482e, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 17-ին:

Եվրոպայի խորհուրդ (2019թ.), «Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/REC(2019)1 առաջարկություն սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/cm-rec-2019-1-on-preventing-and-combating-sexism/168094d894, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 17-ին:

Եվրոպայի խորհուրդ (2022թ.), «Կին և աղջիկ միգրանտների, փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանություն» Նախարարների կոմիտե, 132-րդ նիստ, Ստրասբուրգ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/prems-092222-gbr-2573-recommandation-cm-rec-2022-17-a5-bat-web-1-/1680a6ef9a, մուտքը՝ 2024 թվականի օգոստոսի 10:

Եվրոպայի խորհուրդ (2023թ.), Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա, Մշտական հանձնաժողով, 43-րդ ժողով, Ստրասբուրգ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ rm.coe.int/files07e-2023-armenia-amulsar-gold-ngo-report/1680aa905d, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 17-ին:

Ջիլոզյան Ա. (2017թ.), «Գենդերային քաղաքականությունը Հայաստանում. օրենսդրական, հակագենդերային քարոզչության և համայնքը ձևավորելու ռազմավարությունների ուսումնասիրություն», Կանանց աջակցման կենտրոն, Երևան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.womensupportcenter.org/assets/PDF%20publications/Gender_politics_final.pdf, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 17-ին:

Դի Մեկո Լ. (2023թ.), «Ամբողջ աշխարհում միսոգինիայի դրամայնացում. գենդերային ապատեղեկատվություն և կանանց իրավունքների ու ժողովրդավարության խարխլում», - պնդում էր նա: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ she-persisted.org/wp-content/uploads/2023/02/ShePersisted_MonetizingMisogyny.pdf, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 15-ին:

Էլլենա Մ. և Հոնչար Օ. (2019թ.), «Գենդերազգայուն և կոնֆլիկտազգայուն հարցերի վերաբերյալ լուսաբանման ուղեցույց», ՄԱԿ Կանայք, Կիև: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ eca.unwomen.org/en/digital-library/publications/2019/07/guidelines-for-gender-and-conflict-sensitive-reporting_europe, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 10-ին:

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (2018թ.), «Գենդերազգայուն հաղորդակցության գործիքակազմ», Բրյուսել: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ eige.europa.eu/publications-resources/toolkits-guides/gender-sensitive-communication, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 10-ին:

Ռայստրիք Ն. և Էլլենա Մ. (2024թ.), «Մոլդովա. գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ ձեռնարկ», Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ (ՊԽԼԻ), Քիշնև: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ iwpr.net/sites/default/files/download/publication/IWPR-Gender-Disinformation-Handbook-Moldova.pdf, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 13-ին:

Մախարիա Ս. (խմբագիր) (2020թ.), «Ո՞վ է ստեղծում լուրեր»: Լրատվամիջոցների գլոբալ մշտադիտարկման ծրագիր [GMMP], 6-րդ GMMP:

Հասանելի է հետևյալ հղմամբ՝ whomakesthenews.org/wp-content/uploads/2021/11/GMMP2020.ENG_.FINAL_.pdf, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 9-ին.

Panorama Am (2022թ.), «Ակտիվիստ Թեհմինե Ենոքյանը հաղորդում է ներկայացրել իր և իր ընտանիքի նկատմամբ կատարվող մահափորձերի մասին», 2022 թվականի հուլիսի 13: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.panorama.am/en/news/2022/07/13/Tehmine-Yenokyan-murder-attempts/2706812,մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 17-ին:

ՄԱԿ ԲՀ (2015թ.), «Արտակարգ իրավիճակներում գենդերային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի նվազագույն չափանիշներ»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.unfpa.org/publications/minimum-standards-prevention-and-response-gender-based-violence-emergencies-0, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 15-ին:

ՅՈՒՆԵՍԿՕ. Գենդերազգայուն ցուցանիշներ լրատվամիջոցների համար: Լրատվամիջոցների գործունեության և բովանդակության մեջ գենդերազգայունության չափման ցուցանիշների շրջանակ: Փարիզ, 2012թ.: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000217831, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 15-ին:

ՄԱԿ ՓԳՀ (2016թ.), «Եզրույթների հիմնական բառարան»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unhcr.org/glossary, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 15-ին:

Վոգտ Կ., Դելին Է. և Յանգ Ջ. (2003թ.), «Գենդերային ապատեղեկատվության հասցեագրում. ընթացիկ առաջարկությունների ուսումնասիրություն և դրա դեմ պայքարի ընդլայնման հիմնավորում», ԱՅՐԵՔՍ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.irex.org/sites/default/files/node/resource/Addressing%20Gendered%20Disinformation%20Review%20and%20Analysis.pdf, մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 10-ին:

Լրատվամիջոցները հսկայական ազդեցություն ունեն մեր մտքերի և գործողությունների ձևավորման վրա՝ արտացոլելով հասարակական կառուցվածքներն ու համակարգերը և ներազդելով դրանց վրա: Հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը, սոցիալական մեդիան ձևավորում են հասարակական կարծիքները, ընկալումներն ու համոզմունքները՝ կոփելով մարդկանց աշխարհընկալման ձևը և, որպես հետևանք, հասարակության մեջ վարվելակերպը:

Լրատվամիջոցների դերն է ճշգրտորեն արտացոլել հասարակությունները: Գենդերային «ոսպնյակների» կիրառումը հնարավորություն է տալիս լրագրողներին աշխարհը ներկայացնել իր նրբերանգներով ու բազմազանություններով՝ այդպիսով կոտրելով ձևավորված կարծրատիպերը: Լրագրողները կարող են նպաստել այդ մոտեցումների փոփոխմանը՝ կանանց և տղամարդկանց ներկայացնելով որպես հավասարապես գնահատված ու զանազան, այլ ոչ թե ամրապնդել գենդերային վնասաբեր կարծրատիպերը:

Սույն ուղեցույցը մշակվել է «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում (2022-2023թթ.):

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումը անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE